

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиун» (образование) еженедельник 25.10.2023թ. չորեքշաբթի թիվ 45 (1122)

Պատերազմ

Կառավարության նիստում

«Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը

ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը**: Նրա խոսքով՝ «ՀՀ կրթության» մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով՝ նախատեսվում է ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական միջավայր:

«Ակադեմիական քաղաքի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է լավագույն ստանդարտներին համահունչ և միջազգայնորեն մրցունակ բարձրագույն կրթություն և գիտություն ունենալու, ինչպես նաև այս երկու ոլորտները արդյունավետ հնտեղբելու նպատակով», - նշել է նախարարը:

Հարունակությունը՝ էջ 2

Մասնագիտությունների և քննությունների ցանկը

Կառավարության նիստում հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով (առկա, հեռակա) 2024-2025 ուսումնական տարվա մասնագիտությունների և քննությունների ցանկը հաստատելու մասին» որոշման նախագիծը:

Որոշմամբ կկանոնակարգվի բուհերում նույն մասնագիտության (կրթական ծրագրի) համար ընդունելության միասնական չափանիշների սահմանում և միեւնույն մուտքային պահանջների համապատասխանությունը՝ նկատի ունենալով նաև ՀՀ կառավարության որոշմամբ տվյալ մասնագիտության համար շրջանավարտին շնորհվող համապատասխան որակավորումը:

Հարունակությունը՝ էջ 4

Համակարգ

29 նոր նախակրթարան

Այս ուսումնական տարի Համաշխարհային բանկի համաֆինանսավորմամբ, ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում, ամբողջ հանրապետությունում բացվել են 29 նոր նախակրթարաններ՝ Արարատի, Կոտայքի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Արմավիրի մարզերում:

ՀՀ Արմավիրի մարզում գործում է 9 նոր նախակրթարան՝ Զարթոնքի, Դալարիկի, Ակնաշենի, Բերքաշատի, Երվանդաշատի, Տարոնիկի Մյասնիկյանի, Մուսալեռի միջնակարգ դպրոցներում և Արմավիրի թիվ 10 հիմնական դպրոցում:

Ծրագրի շրջանակում իրականացված միկրոծրագրի արդյունքում կատարվել են վերանորոգման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքներ: Նախակրթարանների ստեղծման նպատակով դպրոցների տարածքից առանձնացվել են հարկաբաժիններ, որոնք վերանորոգվել են, կահավորվել անհրաժեշտ գույքով, ապահովվել նախադպրոցական կրթության կազմակերպման համար բոլոր անհրաժեշտ պարագաներով:

Հարունակությունը՝ էջ 4



Ի՞նչ է պատերազմը: Ամենավատ բանն աշխարհում՝ իսկույն կասի յուրաքանչյուր օրինավոր քաղաքացի: Պատմաբանները կփորձեն այն սահմանել՝ ընդգրկելով պատճառահետեւանքային հանգամանքների և դրդապատճառների ամբողջությունը: Եվ, այնուամենայնիվ, ի՞նչ է պատերազմը. բռնկած ողջ տարածքում համընդհանուր փոխուցնչացում: Բայց նաև՝ համընդհանուր ճիգ, պայքար՝ վասն հավատի, վասն հայրենյաց, վասն գոյատևման... Եվ առերեսույթ ամենասարսափելին անգամ կարող է դառնալ... սրբազան: Սրբազան պատերազմ... Մեր պատմությունը լի է սրբազան պատերազմներով: Ո՛չ երբեք ընդդեմ «անհավատների» և ո՛չ երբեք՝ ի նպատակ մյուս ազգերի ոչնչացման, ստորացման, նվաստացման... կամ տարածքների բռնագավթման: Այլ՝ միայն և միայն հանուն հավատի, հանուն հայրենիքի, հանուն տեսակի պահպանման: Համաշխարհային պատմությունն էլ պատերազմների գնահատման այս սկզբունքն ունի. դիտելով բոլոր ընդդեմ պատերազմները՝ նգովյալ և բոլոր հանուն պատերազմները՝ սրբազան:

1999 թվականի հոկտեմբերի 27-ին Հայոց խորհրդարանում տեղի ունեցած սահմուկեցուցիչ ոճիրը միայն անձերի գլխատում չէր, այլ՝ Հայոց պետականության ոչնչացման փորձ: Ասել է, թե՛ պատերազմի հայտարարում ամենքիս... Եվ մենք, ուզենք, թե չուզենք, պիտի ընդունենք այդ պատերազմը ու մեր թշնամիներին պիտի փնտրենք բոլոր նրանց մեջ, ովքեր շահագրգիռ են մեր դժբախտություններով, ուն ձեռնտու չէ մեր գոյությունը, մեր հզորացումը, մեր իրավունքների վերականգնումը... Եվ նույնիսկ այս դեպքում դարձյալ մեր կռիվը ընդդեմ չէ, անգամ՝ անարգ թշնամու կամ ստոր դավաճանի: Մեր պատերազմը հանուն է, հանուն այն ամենի, ինչի դեմ ուղղված էին հոկտեմբերի 27-ի կրակոցները: Եվ մեր գիտակցված պատերազմը, ժամանակների անվերջության մեջ ընդմիշտ մնալով սրբազան և օրինյալ, հավերժելու է որպես ապրելու կերպ և գոյության առաքելություն՝ վասն Բարու, վասն Լույսի, վասն Տեսակի պահպանման:

Գ. Մ.



Նախադպրոցական

Փոփոխություններ՝ ֆինանսական կարգում

Գործադիրի որոշմամբ՝ փոփոխություններ են կատարվել «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաբանակը սահմանելու մասին» 33 կառավարության որոշման մեջ:

Իրավական ակտի ընդունումը կնպաստի նախադպրոցական կրթության ոլորտում միասնական քաղաքականության իրականացմանը, հնարավոր կլինի առավել արդյունավետ իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացը՝ ապահովելով յուրաքանչյուր երեխայի համար մատչելի եւ հասանելի կրթության հնարավորություն: Նախատեսվում է, որ նպատակային ֆինանսավորման չափը, առանց պետական բյուջեի ծախսերի ավելացման, հաշվարկվելու է գործող կարգի տրամաբանությամբ եւ նպատակաւորված է լինելու բացառապես կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող սաների անհատական ուսուցման եւ զարգացման պահով սահմանված խելամիտ հարմարեցումների (ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ, գույք եւ սարքավորումներ, մատչելի ձեւաչափերով (տպագիր, աուդիո եւ վիդեո) մշակած ուսումնական նյութեր, բանավոր եւ գրավոր հարդորակցման այլընտրանքային միջոցներ) ձեռք բերման ու ստեղծման համար:

Ընդունված փոփոխությամբ նախատեսվում է նաեւ, որ 2024 թվականի սեպտեմբերի 1-ի փոխարեն՝ 2023 թվականի սեպտեմբերի 1-ից զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի երեխաները, 33 պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ կառավարողի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետեւանքով զոհված (մահացած) կամ 33 պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետեւանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի երեխաների նախադպրոցական կրթությունը կիրականացվի պետական բյուջեի հաշվին:

3. 3.



«Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը

սկիզբը՝ էջ 1

«Բուհական կրթության մեջ, շարունակել է նախարարը, հետազոտական բաղադրիչի ավելացումը կապահովվի գիտելիքի եւ հմտությունների ձեռքբերում» ու ամրապնդումը կիրառության մեջ եւ իրական համատեքստում: Ակադեմիական քաղաքը նաեւ երաշխավորելու է ձեռք բերված գիտելիքի լավագույն կիրառությունը՝ ապահովելով հետազոտությունների գերազանցության, կիրառական արդյունքների հայտնաբերման, զարգացման եւ դրանց փոխանցման, նորարարական գործունեության խթանման եւ մտավոր սեփականության պաշտպանության սկզբունքները՝ այսպիսով ծառայելով հանրությանը: Հանրային եւ նասնավոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ այն նաեւ ապահովելու է ստեղծվող գիտելիքի, տեխնոլոգիաների եւ նորարարությունների ներդրումը»:

Ըստ ժամանակակից Անդրեասյանի «Ակադեմիական քաղաք» ծրագիրն իրականացնելու նպատակով 33 կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 585-Ս որոշմամբ ստեղծվել է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը: Ակադեմիական քաղաքի ստեղծման աշխատանքների հետագա հստակեցման ու կանոնակարգման նպատակով էլ անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը:

Նախարարի խոսքով՝ «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգով սահմանվում են ակադեմիական քաղաք ստեղծելու նպատակներն ու խնդիրները, ակադեմիական քաղաքի կառուցումը (բաղադրիչները), ուսանողների, դասախոսների, գիտնականների ու վարչական աշխատողների նախատեսվող թիվը, այն ենթակառուցվածքները, որոնք պետք է ապահովվեն ակադեմիական քաղաքում՝ ի թիվս ակադեմիական քաղաքին ներկայացվող այլ պահանջների:

Ըստ ժամանակակից Անդրեասյանի՝ ակադեմիական քաղաքի ֆիզիկական տեղադրիչի համար նախատեսվում են երկու տեղամասեր՝ Երեւան քաղաքի 17-րդ թաղամասին հարող տարածքը, որի զբաղեցրող մասը պետական կամ համայնքային սեփականություն է, եւ Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքը, որոնց գումարային մակերեսը կազմում է շուրջ 700 հա:

«Ընդ որում՝ հիմնական տեղամասը լինելու է 17-րդ թաղամասին հարող տարածքը. «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքին անդրադարձ է կատարվելու այն պարագայում, եթե գլխավոր հատակագծով դրա կարիքը լինի: Ակադեմիական քաղաքի տարածքները նախատեսվելու են այն տրամաբանությամբ, որ հնարավորություն ունենան ֆիզիկապես տեղակայել մինչեւ 16 բուհ՝ օրենքով նախատեսված մինչեւ ութ պետական խոշորացված բուհ եւ մինչեւ ութ մասնավոր կամ միջազգային բուհ»,- շեշտել է նախարարը:

Հայեցակարգի շրջանակում ակադեմիական քաղաքը բաղկացած է լինելու չորս ակադեմիական կառուցումներից՝ տեխնոլոգիական, արվեստների, կրթական եւ սպասարկման: Նախատեսվող տեղամասերը հարում են միջպետական M1 մայրուղուն: Ակադեմիական քաղաքը մայրաքաղաքին է կապվելու նաեւ երկաթգծով, որի մի մասն արդեն իսկ անցում է հիմնական տեղամասով: Նախատեսվում է, որ ակադեմիական քաղաքի ներսում տեղաշարժը կունենա հատուկ կարգավորում կազմակերպելով հեծանիվներով, էլեկտրական տրանսպորտով եւ այլ եղանակներով:

Ըստ ժամանակակից Անդրեասյանի՝ կադեմիական քաղաքում աշխատելու եւ բնակվելու է մոտ 44 000 մարդ: Նրա խոսքով՝ հարեւանությամբ գտնվող համայնքային կամ մաս-



նավոր սեփականության հողերի վրա անկանոն շինարարությունից խուսափելու նպատակով ձեւավորվելու է նաեւ ավելի ծավալուն տարածքի զարգացման պլան, որը կկարգավորի մերձակայքում շինարարության հարկայնությունը, դիզայնը, ինչպես նաեւ գործունեության տեսակները:

Կառուցվելու են ամբողջությամբ նոր ենթակառուցվածքներ՝ ուսումնական հաստատությունների, հետազոտական կենտրոնների եւ այլ արտադրական եւ փորձարարական կենտրոնների շենքային ենթակառուցվածքներ, գյուղատնտեսական նշանակության փորձարարական վարելահողեր, ինչպես նաեւ առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ կենսապայմանների կազմակերպման համար՝ մարզասրահներ, լողավազաններ, ջրային ավազաններ, տրանսպորտային համակարգ, ավտոկայանատեղիներ եւ մնացած բոլոր ենթակառուցվածքները: Ըստ նախարարի՝ ակադեմիական քաղաքի հիմնական տեղամասում կառուցվելու է նաեւ ազգային ստադիոն՝ անհրաժեշտ հարակից ենթակառուցվածքներով. ստադիոնի տարողունակությունը նախատեսվելու է մինչեւ 35 000 հանդիսատեսի համար,

«Համագործակցության պայմանավորվածություններ են արդեն ձեռք բերվել միջազգային հեղինակավոր ճարտարապետական (gmp Architekten) եւ կառուցապատող ընկերությունների հետ, իսկ արվեստների կլաստերի բովանդակության եւ կառուցվածքի մշակման համար՝ Մեծ Բրիտանիայի եւ Յուրտային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Լոնդոնի Արվեստների համալսարանի (University of the Arts London) հետ: Ակադեմիական քաղաքի կառուցման ժամանակացույցը կազմված է երեք հիմնական փուլերից՝ նախագծման, կառուցման եւ սպասարկման: Նախագծման փուլը նախատեսվում է մեկնարկել 2023 թվականի հոկտեմբերից եւ ավարտին հասցնել 2025 թվականի սեպտեմբերին: Կառուցման փուլը նախատեսվում է մեկնարկել 2025 հոկտեմբերից. նախնական գնահատմամբ՝ այն կավարտվի 2029 թվականի դեկտեմբերի ամսին: Այս փուլը պլանավորվելու է այնպես, որ միջանկյալ ժամանակահատվածներում ունենանք կաստերների, դրանց բաղադրիչների կամ հանգուցային կառույցների փուլային հանձնում»,- նշել է նախարարը՝ հավելելով, որ սպասարկման փուլը ողջ ծավալով կսկսվի 2030 թվականի հունվարից:

33 վարչապետ Նիկոլ Փաշինյանը ուրախությամբ փաստել է ըստ էության թեւաւորում ենք ակադեմիական քաղաքի ստեղծման գործնական փուլ: «Առաջիկայում պայմանագիր կստորագրենք ճարտարապետական ընկերության հետ, որը ճար-

տարապետության եւ շինարարության Հաստատանի ազգային համալսարանի հետ համատեղ կսկսի նախագծման աշխատանքները: Այս պահին էլ արդեն տեղում իրականացվում են աշխատանքներ, հաշվարկվում են ենթակառուցվածքները եւ այլն: Ակադեմիական քաղաքի ստեղծման համար ընտրված է բավականին մեծ տարածք՝ 700 հա: Ընդ որում՝ մենք հաշվարկել ենք այնպես, որ անհրաժեշտության դեպքում տարածքը նաեւ ընդլայնվելու հնարավորություն ունենա: Տարածքը տեղակայված է Երեւանի, Կոտայքի, Արագածոտնի եւ Արմավիրի մարզերի կցատեղում սահմանակցում է Պոռչան, Քասախ, Աշտարակ, Էջմիածին եւ Արմավիրի ու Կոտայքի մարզերի այլ բնակավայրերին: Շատ կարելի է 4 կլաստերները. տեխնոլոգիականի մեջ պատկերացնում ենք նաեւ գյուղատնտեսականը: Ընդ որում՝ այստեղ ֆերմերային փորձարարական շատ մեծ կենտրոն կստեղծվի: Այսինքն՝ գյուղատնտեսության ոլորտի ուսանողները հնարավորություն կունենան տեղում արակտիկ աշխատանքներ իրականացնելու: 700 հա տարածքը, միանշանակ, պետք է մենա կադրեմիական քաղաքի տիրույթում, եւ եթե պարզվի՝ այդքան տարածք մեծ է, ապա այն հատվածներում, որտեղ կառուցապատում չի իրականացվի, այլ լուծումներ կգտնենք եւ կանաչապատում կիրականացնենք: Ինչ վերաբերում է բուհական ոլորտի բովանդակային զարգացումներին եւ 8 բուհերի ձեւավորման գործընթացին, ԿԳՄՍ նախարարությունն արդեն իսկ հայտարարություն է տարածել այդ մասին, որով բուհական ոլորտի գործընկերներին հրավիրում է քննարկումների: Ակադեմիական քաղաքը պետք է լինի ոչ միայն ուղղակի համալսարանների եւ ուսանողների հավաքատեղի, այլեւ իր ճարտարապետական-քաղաքաշինական լուծումներով նոր խոսք բերի ու նաեւ ինտելեկտուալ ժամանցի հաճելի վայր դառնա 33 բնակիչների եւ օտարերկրյա զբոսաշրջիկների ու այցելուների համար»:

Ի հավելումն նախարարը ժամանակակից Անդրեասյանը նաեւ տեղեկացրել է, որ նախատեսվում է նաեւ ավագ դպրոցների առկայություն բոլոր կլաստերներում: «Սա ապահովելու է կրթության շարունակականություն, որպեսզի ավելի վաղ փուլից կարողանանք աշխատել երեխաների հետ: Ընդգծենք, որ բովանդակային բարեփոխումների շրջանակում բավականին աշխատանք արդեն իսկ արված է: Բառացիորեն նույնների սկզբին արվեստների ուղղությամբ աշխատանքային խումբը կայացել է Լոնդոնի արվեստների համալսարանի կոնցեպտի մշակման վերջնականացման համար: Մենք ընտրել ենք յուրաքանչյուր կլաստերի համար միջազգային փորձառու գործընկեր ունենալու մտտեցումը: Տեխնոլոգիական ուղղությամբ պայմանավորվածություն ունենք Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանի հետ, որն օգնելու է կոնցեպտուալ մշակումների հարցում: Կրթական ուղղությամբ աշխատանք ենք անգլիական UCL-ի հետ: Կարծում ենք՝ միջազգային փորձառուները կհանգեցնի ավելի ճիշտ աշխատանքների: Ինչ վերաբերում է տեղում իրականացվող աշխատանքներին՝ անհրաժեշտ երկրաբանական տվյալների շուրջ 95 տոկոսն արդեն հավաքված է: Նախատեսում ենք, որ մինչեւ նույնների սկիզբ կկարողանանք ավարտել այդ աշխատանքը: Հաստատվելով ընդգծենք, որ սրանից էապես շահելու է ճարտարապետության եւ շինարարության ազգային համալսարանը, քանի որ ծրագիրը նախատեսում է թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների ակտիվ ներգրավվածություն նախագծման բոլոր փուլերում: Այդպիսով, սա մեզ համար դառնալու է նաեւ կրթական ծրագիր»,- իր խոսքը եզրափակել է նախարարը:

Հեղինակ՝ ՅՈՒՆԱՆԱՍՅԱՆ

Միկրոէլեկտրոնիկա

18-րդ ամենամյա միջազգային օլիմպիադան ամփոփեց արդյունքները

ՀՀ Վարչապետի հովանու ներքո անցկացվող օլիմպիադան Երևանում հյուրընկալել է աշխարհի 12 երկրներից ժամանած հաղթողներին

Միկրոէլեկտրոնիկայի 18-րդ ամենամյա միջազգային օլիմպիադայի արդյունքներն ամփոփվեցին Սինոփսիս Արմենիայում տեղի ունեցած հանդիսավոր արարողության ժամանակ:

Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային 18-րդ օլիմպիադայում մրցել էին 270 մասնակից՝ 14 երկրից. ԱՄԷ, ԱՄՆ, Բելառուս, Բոսնիա եւ Հերցեգովինա, Բրազիլիա, Իրան, Հայաստան, Հորդանան, Չիլի, Պերու, Ռուսաստան, Սերբիա, Վիետնամ եւ Ուկրաինա:

Օլիմպիադան, ինչպես միշտ, իրականացվել է երկու փուլով: Առաջին փուլն անց է կացվել 14 մասնակից երկրներում միաժամանակ՝ ստուգարքի ձևով, իսկ երկրորդ՝ եզրափակիչ փուլը, որը ներառել է համապարփակ լուծումներ պահանջող ճարտարագիտական բարդագույն խնդիրներ, անց է կացվել Հայաստանում Սինոփսիս Արմենիայի ուսումնական դեպարտամենտում: Առաջին փուլին մասնակցած 270 մասնակիցներից 28-ն անցել են եզրափակիչ փուլ, որոնցից 12-ը Երևանից են: Եզրափակիչ փուլին մասնակցելու համար Հայաստան են ժամանել 14 մասնակից՝ հետևյալ 12 երկրներից. ԱՄԷ, Բելառուս, Բոսնիա եւ Հերցեգովինա, Բրազիլիա, Իրան, Հայաստան, Հորդանան, Չիլի, Պերու, Ռուսաստան, Սերբիա եւ Վիետնամ:

Միկրոէլեկտրոնիկայի 18-րդ ամենամյա միջազգային օլիմպիադայի հաղթողների պարգևատրման արարողության ժամանակ առաջին տեղի մրցանակը հանձնեց ՀՀ ԲՏԱ Նախարար **Ռոբերտ Խաչատրյանը**:

Երկրորդ տեղի մրցանակը հանձնեց օլիմպիադայի գլխավոր հովանավոր Դիջիթեյն ընկերության փոխտնօրեն **Մարտին Մարտիրոսյանը**:

Երրորդ տեղի երկու մրցանակները հանձնեցին Օլիմպիադայի Կազմկոմիտեի Նախագահ, ՏՀՏ Գործատուների միության Նախագահ, Յունիքոմփ ընկերության տնօրեն **Արմեն Բաղդյանը** եւ Սինոփսիս Արմենիայի Նախագահ, Սինոփսիսի առաջատար գիտնական **Երվանդ Զորյանը**:

Միկրոէլեկտրոնիկայի 18-րդ ամենամյա միջազգային օլիմպիադայի հաղթողներն են.

- Առաջին մրցանակակիր է դարձել **Նիկոլոս Բաբիկը**՝ Բոսնիա եւ Հերցեգովինայից,
- Երկրորդ տեղը զբաղեցրել է **Ֆիլիպ Ստեփանովիչը**՝ Սերբիայից,
- Երրորդ մրցանակին արժանացել են՝
- **Ազրա Ելեզովիչը**՝ Բոսնիա եւ Հերցեգովինայից,
- **Էդգար Պապյանը**՝ Հայաստանից:



Ամենամյա միջազգային միկրոէլեկտրոնիկայի օլիմպիադան հիմնվել է 2006թ.-ին եւ անց է կացվում ՀՀ Վարչապետի հովանու ներքո: Ուշագրավ է, որ այն կազմակերպվում է միջազգային հեղինակություն ունեցող ամենամեծ մասնագիտական կառույցի՝ էլեկտրոնային եւ էլեկտրոնիկայի ճարտարագետների ինստիտուտի Թեստային տեխնոլոգիաների տեխնիկական խորհրդի (IEEE TTTC) հետ համագործակցությամբ:

Օլիմպիադայի նախաձեռնողն ու գլխավոր կազմակերպիչն է Սինոփսիս Արմենիան, իսկ գլխավոր հովանավորը՝ Դիջիթեյն ընկերությունը: Գլխավոր գործընկերն է «Յունիքոմփ» ընկերությունը: Գլխավոր աջակիցը՝ Ucom ընկերությունը: Օլիմպիադայի աջակիցներից են նաեւ ՏՀՏ գործատուների միությունը, «Վիսաֆեր» տեխնոպարկը, «Հայաստան» Համահայկական հիմնադրամը:

«Հայաստանը շարունակում է պահպանել եւ զարգացնել միկրոէլեկտրոնիկայի ոլորտում դեռեւս անցյալ դարի կեսերին ձեւավորած իր առաջատարության եւ գերազանցության ավանդույթները», - ասում է Օլիմպիադայի Կազմկոմիտեի Նախագահ, «Յունիքոմփ» ընկերության տնօրեն Արմեն

Բաղդյանը: «Այս օլիմպիադայի ոլորուն ձեւով նպաստում է Հայաստանի՝ որպես միկրոէլեկտրոնիկայի ոլորտի առաջատար երկրի, ճանաչելիության բարձրացմանը»:

«Ոգեւորիչ է տեսնել, որ օլիմպիադան շարունակում է ծառայել իր հիմնական նպատակին եւ հաստատակամորեն մեծացնում միկրոէլեկտրոնիկայի նկատմամբ հետաքրքրությունը ողջ աշխարհի երիտասարդության շրջանում», - ասում է Օլիմպիադայի Ծրագրային կոմիտեի նախագահ, Սինոփսիս Արմենիայի ուսումնական դեպարտամենտի տնօրեն եւ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Միկրոէլեկտրոնային սխեմաներ եւ համակարգեր» ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ԹԹՔ, անդամ, պրոֆեսոր **Վազգեն Մելիքյանը**:

«Սինոփսիս Արմենիայի կողմից հիմնադրված այս օլիմպիադայի հիմնական նպատակն է բացահայտել մինչեւ 30 տարեկան առավել տաղանդավոր ճարտարագետներին: Միեւնույն ժամանակ այն օգնում է բացահայտելու մասնակիցների գիտելիքների մակարդակը՝ տվյալ երկրի միկրոէլեկտրոնիկայի ոլորտի կրթական ծրագրերում անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու նպատակով», - ասում է Սինոփսիս Արմենիայի նախագահ, Սինոփսիսի առաջատար գիտնական, դոկտոր Երվանդ Զորյանը եւ հավելում. «Մենք պետք է վստահ լինենք, որ Հայաստանում մեր ոլորտում ապահովում ենք մրցունակ եւ համաշխարհային պահանջներին բավարարող կրթության որակ»:

«Կրթությունը մշտապես գտնվում է Դիջիթեյն ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի կիզակետում, այդ իսկ պատճառով մենք հպարտորեն հանդիսանում ենք Միկրոէլեկտրոնիկայի միջազգային 18-րդ օլիմպիադայի գլխավոր գործընկերը: Ընկերությունը մեծապես կարեւորում է երիտասարդների շրջանում հենց համանման ծրագրերին

աջակցելը, քանի որ քաջ գիտակցում ենք, որ երիտասարդությունը եւ կրթությունը մեր օրոյա աշխարհի շարժիչն են, հետեւաբար, անհարժեշտ է անել ամեն հնարավորը նրանց կրթության ու զարգացման համար», - ասում է Դիջիթեյն ընկերության հիմնադիր **Վարդգես Վարդանյանը**:


«Օլիմպիադայի հիմնական նպատակներից մեկը միկրոէլեկտրոնիկայի ոլորտի երիտասարդ մասնագետների միջազգային համայնքի ձեւավորումն է: Այս տարիների ընթացքում օլիմպիադային մասնակցել են հարյուրավոր բացառիկ երիտասարդներ աշխարհի ավելի քան 25 երկրներից, որոնք հանդիսանում են վաղվա առաջատար տեխնոլոգիաների կերտողները», - ասում է Օլիմպիադայի Կազմկոմիտեի փոխնախագահ, Սինոփսիս Արմենիայի տնօրեն **Հովիկ Մուսայեանը**:

Օլիմպիադան ընդգրկում է հետևյալ թեմաները՝


- թվային ինտեգրալ սխեմաների նախագծում եւ թեստավորում,
- անալոգային եւ խառը ազդանշանային ինտեգրալ սխեմաների նախագծում եւ թեստավորում,
- կիսահաղորդչային սարքեր եւ տեխնոլոգիա,
- ինտեգրալ սխեմաների ավտոմատացված նախագծման մաթեմատիկական եւ ալգորիթմական ապահովում:

Օլիմպիադայի հաղթողների Պարգևատրման արարողությունից բացի, օլիմպիադայի եղրափակիչ փուլի մասնակիցներն, ինչպես միշտ, ունեն հատուկ ծրագիր՝ ծանոթանալու Հայաստանի պատմամշակութային ժառանգությանն ու քաղաքամայր Երևանին:

Գայանե ՄԱՐԿՈՍՅԱՆ
Սինոփսիս Արմենիայի
համրային կապերի
եւ հաղորդակցության ղեկավար



Հուշարձանների վերականգնման համար



ՀՀ կառավարության որոշմամբ՝ ԿԳՄ Նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով կապիտալ ծրագրերին հատկացված միջոցների միջեւ կատարվել է վերաբաշխում՝ 15 մլն 144 հազար դրամ գումարի շրջանակում: Գումարը կուղղվի ՀՀ-ում մի շարք հուշարձանների վերականգնման եւ նախագծման աշխատանքներին:

Մասնավորապես՝ 10 մլն 96 հազար դրամ գումար կհատկացվի ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղի Սբ. Գեորգ եկեղեցու գավիթի վրա զանգակատան տեղակայման աշխատանքների իրականացման համար: Ներկայումս պետական բյուջեի միջոցներով իրականացվում են նաեւ եկեղեցու վերականգնման եւ տարածքի բարեկարգման աշխատանքները: Նախատեսվում է, որ վերականգնումից հետո կառույցը ծառայելու է ոչ միայն զբոսաշրջային-ճանաչողական նպատակով, այլև շահագործվելու է իր ֆունկցիոնալ բնույթին համապատասխան:

Մնացած գումարը կուղղվի Արմավիրի մարզի Բաղրանյան համայնքի Բագարան բնակավայրի Շուշանավանքի նորոգման, ամրակայման եւ վերականգնման, Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի «Բերդկունք» ամրոցի եւ կից կառույցների ամրակայման, վերականգնման եւ տարածքի մասնակի բարեկարգման, ինչպես նաեւ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի Օրբելյանների քարավանատան (Սելիմի) նորոգման, ամրակայման, վերականգնման եւ տարածքի բարեկարգման համար անհրաժեշտ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներին:

29 նոր նախակրթարան

սկիզբը՝ էջ 1

Գեղեցիկ ու գունագեղ սենյակներ, հարմարավետ պահարաններ, խաղալիքներով լի անկյուններ...

Նորաստեղծ նախակրթարաններում պահպանվել են ներառական կրթության կազմակերպման բոլոր պահանջները...

Հոկտեմբերի առաջին տասնօրյակում 33 Արագածոտնի մարզի Աշտարակի, Մուղնու, Բյուրականի, Լեռնապարի, Թալինի, Աշնակի Ազարակավանի, Վարդաբլուրի կրթական հաստատություններում են բացվել 29 նոր նախակրթարաններ...



Նոր նախակրթարաններ են բացվել նաև 33 Արարատի մարզի Արարատ գյուղի, Հովտաշենի, Շաղափի, Ջրհովիտի, Սուրենավանի միջնակարգ դպրոցներում...

Հարկ է նշել, որ նախապես իրականացվել է նաև նախակրթարաններում աշխատող դաստիարակների վերապատրաստում:

Հ. Հ.

Մասնագիտությունների և քննությունների ցանկը

սկիզբը՝ էջ 1

Մասնավորապես՝ դիմորդների գիտելիքների ստուգման գործընթացն իրականացնելիս, անկախ բուհի կարգավիճակից (պետական, ոչ պետական), բոլոր դիմորդների համար կապահովվեն ընդունելության միեւնույն պայմանները...

Նախագիծը ներկայացնելիս հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթների՝ 2024-2025 ուստարվա դիմորդները ընդունելության միասնական քննություններ կարող են հայտագրել և հանձնել 2 անգամ...

Նախորդ՝ 2023-2024 ուսումնական տարվա համար նախատեսված ցանկի համեմատ, նախագծում որոշակի փոփոխություններ են կատարվել, մասնավորապես՝

Երեւանի պետական համալսարանի «Միջուկային ռեակտորների ֆիզիկա», «Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ», «Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա» կրթական ծրագրերը հանվել են ցանկից...

Միաժամանակ, Երեւանի պետական համալսարանում «Ֆիզիկա», «Ռադիոֆիզիկա» մասնագիտությունների համար նախատեսվող քննությունների շարքում չի ընդգրկվել «Անզլերեն» քննությունը:

որպես կանընտրական քննություն, ամրագրվել են միայն «Ֆիզիկա» և «Մաթեմատիկա» առարկաների քննությունները: Երեւանի պետական համալսարանի «Միջազգային հարաբերություններ» կրթական ծրագրի ընդունելության քննություններում են կատարվել և փոփոխություններ՝ «Հայոց լեզվի» քննությունը սահմանվել է պարտադիր, «Հայոց պատմության» և «Օտար լեզվի» քննությունները կանընտրական: Պահպանվելու են մասնագիտության (կրթական ծրագրի) համար ընդունելության միասնական չափանիշների սահմանամբ և միեւնույն մուտքային պահանջների համապատասխանության սկզբունքը...

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մասնագիտությունների ցանկում ներառվել են նոր՝ «Բլոկայն և ՎԵԲ տեխնոլոգիաներ» և «Ավիատիեզերական ճարտարագիտություն» կրթական ծրագրերը՝ համապատասխանաբար «Տեղեկատվական անվտանգություն» և «Ավիացիոն և հրթիռային տեխնիկա» շրջանակում:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 2024-2025 ուստարվա ընդունելության բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի (առկա և հեռակա ուսուցման) մասնագիտությունների ցանկում «Ագրոնոմիա», «Անասնաբուծություն» և «Անասնաբուծություն» մասնագիտություններով ընդունվելու համար «Մաթեմատիկա» որպես պարտադիր մրցութային առարկա,

փոխարինվել է «Կենսաբանություն» առարկայով: Հաշվի առնելով «Ճշգրիտ գյուղատնտեսություն» և «Տրանսպորտային և լոգիստիկ համակարգեր» կրթական ծրագրերով սովորողների համար «Անզլերեն», իսկ «Անհամաբերյալ անվտանգություն» կրթական ծրագրով սովորողների համար՝ «Քիմիա» առարկայի ինացույցային կարեւորությունը՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի առկա և հեռակա ուսուցման ձևերի որոշ կրթական ծրագրերի ընդունելության քննությունների ցանկում կատարվել են փոփոխություններ, մասնավորապես՝ «Ագրոէկոլոգիա», «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա», «Բույսերի պաշտպանություն», «Ջերմատնային ագրոտեխնոլոգիա», «Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա», «Անտառային տնտեսություն և բնակավայրի կանաչապատում», «Անասնաբուծություն» կրթական ծրագրերի ընդունելության քննությունները փոխարինվել են «Կենսաբանություն», «Ֆիզիկա» կամ «Քիմիա» առարկաներով:

Նշենք, որ «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով» ամրագրված սկզբունքներն ու նախանշված թիրախները հաշվի առնելով՝ 2025-2026 ուստարվանից նախատեսվում է բուհերի ուղղվածությանը չհամապատասխանող մասնագիտություններ չնախատեսել՝ պայմանավորված նաև ըստ ուղղությունների բուհերի (այդ թվում՝ գիտական կազմակերպությունների հետ), նրանցում ուսուցանվող մասնագիտությունների խոշորացման ու կոնսոլիդացիայի գործընթացի հետ:

Հեղինակ՝ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Երեւանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնին շնորհվել է «Ազգային» կարգավիճակ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ Երեւանի Հովհ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնին շնորհվել է «Ազգային» կարգավիճակ: Համաձայն հիմնավորման Երեւանի Հովհ. Թումանյանի անվ. պետական տիկնիկային թատրոնը հանդիսանում է Հայաստանի մշակութային առաջատար թատերախմբերից մեկը, որն իր գործունեությամբ նպաստում է ոչ միայն հայ տիկնիկային արվեստի զարգացմանը, այլև մանուկների գեղագիտական դաստիարակության ապահովմանը: Ավելի քան ութ տասնամյակ թատրոնը հայ մանուկներին ներկայացրել է տարածել է տիկնիկային արվեստը: Թատրոնում մշտապես ներկայացված են հայ և համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունները: Իր գործունեության ընթացքում թատրոնում բեմադրվել է ավելի քան 435 ներկայացում, որից ներկա է եղել ավելի քան 5.000.000 հանդիսատես: Թատրոնը երբեք չի դադարեցրել իր գործունեությունը՝ անգամ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Թատրոնն իր հանդիսատեսին ներկայացնում է տիկնիկային արվեստի բոլոր ժանրերով՝ ձեռնոցային, խամաճիկային, ձողիկավոր, պլանշետային, տանտամարեսկոներ, մամուլենգներ, մանեկեններ, սովորաբար տիկնիկներ: Այսօր թատրոնի ակտիվ խաղացանկում կա ավելի քան 40 ներկայացում ինչպես մանուկների, այնպես էլ մեծահասակների համար՝ ապահովելով ժանրային բազմազանությունը: Թատրոնը շատ ակտիվ շրջա-գայում է՝ հյուրախաղային գործունեություն ծավալելով արտերկրում և ՀՀ մարզերում: Թատրոնը մշտապես ակտիվորեն մասնակցել է մոտ 100 միջազգային փառատոներին, մասնավորապես՝ ԱՄՆ, Կանադա, Կոստա Ռիկա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Լեհաստան, Չեխիա, Սերբիա, Հունգարիա, Լիտվա, Ռումինիա, Բելոռուս, Մոլդովա, Վրաստան, Ղազախստան, ԱՄԷ, Լիբանոս, Եգիպտոս, Սիրիա, Թունիս, Իրան, Չինականաստան, Թաիլանդ, Բահրեյն արժանանալով տարբեր մրցանակների ու դիպլոմների, այդ թվում՝ ամենահեղինակավոր փառատոներում («Չեխովյան», «Ոսկե դիմակ» և այլք): Թատրոնի գործունեությունը և հարուստ փորձը հիմք են հանդիսացել մարզերում տիկնիկային թատերախմբերի ձևավորման համար, որոնց մշտապես ցուցաբերվում է մասնագիտական աջակցություն ՀՀ-ի Թումանյանի անվ. պետական տիկնիկային թատրոնի կողմից: Թատրոնի ստեղծագործական կազմն իրականացնում է մասնագիտական վերապատրաստում, աջակցում համայնքային տիկնիկային թատերախմբերի խաղացանկի ձևավորմանը: Վերջին երկու տասնամյակների ընթացքում թատրոնն էական բարձրացրել է տիկնիկային արվեստի որակը և դրա ներկայացվածությունը միջազգային հարթակներում, էական նպաստել է տիկնիկավարների դպրոցի կայացմանը: Միեւնույն ժամանակ, թատրոնն իր գործունեությամբ խթանում է ՀՀ-ում տիկնիկագործության զարգացումը և տիկնիկային արվեստի ժամանակակից ու նորարարական մեթոդների ներդրում: Այս ամենին զուգահեռ, ի հավելումն իր կանոնադրական նպատակներից բխող գործունեության, թատրոնն առաջիններից էր, որ լիարժեք հնարավորություններ է ընձեռել երիտասարդ մասնագետների ինքնադրսերմանն ու կատարելագործմանը, փորձարարական-նորարարական պրոցեսների ձևավորմանը: Այդ երիտասարդներից շատերն այսօր տարբեր թատրոններում հանդես եկող առաջատար ռեժիսորներ են:



Մշակույթ

Նախագիծ

Երկխոսություն՝ գեղանկարչության ու երաժշտության միջև

Փոփոխություններ՝ կամավոր ատեստավորման կարգում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը Հայաստանի ազգային պատկերասրահում հանդիպել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Տիգրան Մանսուրյանի եւ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի պետական կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար Ռուբեն Մլքեյանի հետ:



Հանդիպումը տեղի է ունեցել «Հակոբ Հակոբյան 100. Գոգու հայելի» ցուցադրության շրջանակում. ՀԱՊ տնօրեն Մարինա Հակոբյանի ուղեկցությամբ հյուրերը շրջել են ցուցասրահներում, ծանոթացել մուշկերին: Տիգրան Մանսուրյանը կիսվել է Հակոբ Հակոբյանի մասին հուշերով, պատմել է Արտավազ Փելեյանի նկարի ստեղծման պատմության, ժանսեմի հետ մտերմության մասին:

րարը՝ դիմելով երաժշտարվեստի երախտավորներին:

Տիգրան Մանսուրյանի գնահատմամբ՝ Հայաստանում կան տաղանդավոր երիտասարդ կոմպոզիտորներ, որոնք դեռ լսարան չունեն, եւ պետք է ամեն կերպ խրախուսել նրանց: «Այս սերունդը հոգատարության կարիք ունի», - ասել է Տիգրան Մանսուրյանը: Մանսուրյանը նաեւ տեղեկացրել է, որ միջնադարյան տաղերգու Նահապետ Քուչակի հայրենների հիման վրա երաժշտական շարք է գրել, որը կրում է «Հայրեններ՝ սիրո, պանդխտության եւ լուսնյակ գիշերների» խորագիրը: Շարքը դեռեւս չի ձայնագրվել:

պատկերասրահի տարբեր սրահներում երիտասարդ կոմպոզիտորների հետ համագործակցաբար հնչեցնել թե՛ Մանսուրյանի հայրենների շարքը, թե՛ նրանց ստեղծագործությունները:

Հայաստանի պետական կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար Ռուբեն Մլքեյանը ներկայացրել է երգչախմբի գործունեության մանրամասները, առկա խնդիրները, ձեռք բերած հաջողությունները:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը նշել է նաեւ ոլորտում մեկենասության մշակույթի ներդրման կարեւորությունը՝ արվեստի հանրահռչակման, պետության հետ այս ուղղությամբ համագործակցության տեսանկյունից:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ առաջիկա ամեկիքներին, համերգային ծրագրերին, ընթացիկ խնդիրներին վերաբերող մի շարք հարցեր:

«Հակոբ Հակոբյանի յուրաքանչյուր կտավ բարոյականության դաս է՝ իր մաքրությանը», - ասել է մանսուրյան անվանի գեղանկարչին բնորոշելիս:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը շնորհակալություն է հայտնել մեծանուն արվեստագետներին հանդիպման համար եւ շեշտել նրանց լսելու, ոլորտի խնդիրները միասին արձանագրելու եւ լուծումներ փնտրելու կարեւորությունը:

«Սեզ համար կարելու է ավագ սերնդի փորձառությունն ու ստեղծած արժեքները կամրջել երիտասարդների՝ մեր ժամանակներում ստեղծվող նորարար գաղափարներին: Այն ազգը, որը մոռանում է անցյալը, չի կարող կառուցել իր ներկան: Դուք ձեր անցած ճանապարհով, արժեքաբանությամբ ստեղծել եք այն ամուր հողը, որի վրա մեր երիտասարդները պետք է զարգացնեն իրենց ներուժը», - ասել է ԿԳՄՍ փոխնախարարը:

Աջակցություն

Ի գիտություն

Արցախից բռնի տեղահանված ուսանողների

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հրապարակվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ու ուսումնական հաստատությունների ցանկերը, որոնցում կարող են իրենց ուսումը շարունակել 2023 թ. սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողները:

տություններով՝ 300 000 դրամ:

Կրթաթոշակների առավելագույն չափերը հաստատվել են՝ ըստ տվյալ կրթական ծրագրով ուսուցում ապահովող բոլոր պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սահմանված վարձավճարների արժեքների հիման վրա:

հանված ուսանողները:

Ցանկերում ներկայացված են տրամադրվելիք կրթաթոշակների առավելագույն չափերը՝ ըստ կրթական ծրագրերի, եւ տարբեր պետական բուհերում նույն կրթական ծրագրի համար նախատեսված ուսման վճարների չափերը 2023-24 ուստարվա համար՝ ըստ մասնագիտությունների:

ՀՀ կառավարությունը հաստատել է 2023 թ. սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների 2023-2024 ուստարվա ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը եւ տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերը՝ ըստ կրթական ծրագրերի:

Ավագ դպրոց հաճախած կամ հիմնական կրթությունից հետո կրթությունից դուրս մնացած անձանց համար, որոնք կրթությունը շարունակում են նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրով, պետության կողմից կրթաթոշակ չի նախատեսվում:

Ցանկերում ներառված բուհերում մագիստրատուրայի ուսման վարձի չափը չի կարող գերազանցել 560 հազար դրամը, իսկ բակալավրիատի կրթական ծրագրերի դեպքում՝ 700 հազար դրամը: Կրթաթոշակների առավելագույն չափերը հաշվարկվել են՝ ըստ տվյալ կրթական ծրագրով ուսուցում ապահովող բոլոր պետական բուհերի, ներառյալ՝ մասնաճյուղերի հաստատված վարձավճարների միջին արժեքների:

Ցանկերում ներկայացված են տրամադրվելիք կրթաթոշակների առավելագույն չափերը՝ ըստ կրթական ծրագրերի, ուսուցման ձևերի եւ ոլորտների:

Պետության կողմից կրթաթոշակ չի նախատեսվում նաեւ ոչ պետական հավատարմագրված ուսումնական հաստատություններում ուսանողական իրավունքը վերականգնած ուսանողների համար, որոնք կարող են մինչեւ ս/թ հոկտեմբերի 31-ը տեղափոխվել ցանկում ներառված նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններ:

Որոշ կրթական ծրագրերի դեպքում սահմանված կրթաթոշակի չափն ավելի ցածր է, քան որոշ բուհերում այդ ծրագրի համար սահմանված ուսման վճարը: Այդ դեպքում ուսանողը կարող է ընտրել նույն կրթական ծրագիրը իրականացնող այլ ուսումնական հաստատություն կամ մարզային մասնաճյուղ (ինչը որոշակիորեն կթեթևացնի նաեւ կեցության հետ կապված ծախսերը) կամ կարող է լրացնել տարբերությունը սեփական միջոցներով: Այն պարագայում, եթե Լեռնային Ղարաբաղում ուսումնառած կրթական ծրագիրը ներկայացված չէ հրապարակված ցանկում, ուսանողը կարող է ուսումը շարունակել հարակից կրթական ծրագրով:

1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի մասնագիտություններով՝ 245 000 դրամ:

2. Միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցմամբ՝

- արվեստի ոլորտի մասնագիտություններով՝ 480 000 դրամ.

- առողջապահության ոլորտի մասնագիտություններով՝ 500 000 դրամ.

- այլ ոլորտների մասնագիտություններով՝ 300 000 դրամ:

3. Միջին մասնագիտական կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ մասնագիտություններով՝ 300 000 դրամ:

Համատեղությամբ աշխատող ուսուցիչների վճարման դրույքը նաև վերանայվել է՝ լավարկման սկզբունքով: Ինչպես հիմնական, այնպես էլ համատեղությամբ աշխատավայրում ուսուցիչը կունենա դրույքաչափի փոփոխություն եւ կստանա հավելավճար (ՆՄԿՈՒ ոլորտում համատեղությամբ աշխատելու դեպքում հանրակրթական առարկաների ժամերի վրա եւս հավելավճարները տարածվում են):

Հաստատությունների հիմնական առարկայացանկից դուրս էին մնացել առարկաներ, որոնք հարակից են որոշմամբ սահմանված առարկաներին եւ հիմնականում դասավանդվում են նույն մասնագետի կողմից: Սահմանվում է, որ հավելավճարը տրվելու է դասավանդվող բոլոր առարկաների համար: Նախագծով առաջարկվում է «Բնագիտություն» առարկայից հետո ավելացնել «Բնություն» եւ «Իմ հայրենիքը», «Աշխարհագրություն» առարկայից հետո՝ «Հայաստանի աշխարհագրություն», իսկ «Ինֆորմատիկա» առարկայից հետո, տարրական դասարանից սկսած, «Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն» առարկաները:

Առաջարկվող փոփոխություններով կկարգավորվեն նաեւ մի շարք ոչ միանշանակ մեկնաբանվող դրույքներ:

Մասնագիտական կառույցները, շահագրգիռ կազմակերպությունները եւ անծիմք նախագծի վերաբերյալ իրենց կարծիքներն ու դիտողությունները կարող են ներկայացնել մինչեւ 2023 թ. նոյեմբերի 3-ը:

«Մավետա»

Ի՞նչ է տվել ծրագիրը քոլեջներին

«Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության եւ ուսուցման արդիականացում» (ՄԱՎԵՏԱ) ծրագրի շրջանակում դուրս կրթություն է ներդրվել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղում եւ Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում:

Նշյալ հաստատությունների ղեկավարները մեզ պատմել են ծրագրի ներդրման, դուրս կրթության ազդեցության եւ դրա բարելավման, ծրագրի շրջանակում ստացված աջակցության եւ վեր հանված մի շարք խնդիրների մասին:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղը ստեղծվել է 2004 թվականին: Ներկայումս միջին մասնագիտական կրթական ծրագրով մասնաճյուղում ուսուցանվում են «Հաշվապահական հաշվառում», «Մենեջմենթ (Կառավարում)», «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա», «Հողաշինարարություն», «Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա», «Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում», «Անասնաբուժություն», «Զերմատնային տնտեսություն» մասնագիտությունները: 2022թ. մասնաճյուղին կից ստեղծվել է ուսումնափորձարարական կենտրոն, որտեղ արդեն ավարտվել են գյուղատնտեսական մեքենատրակտորային կայանի շինարարական աշխատանքները: Հայ օգնության ֆոնդի ֆինանսական աջակցությամբ մասնաճյուղին կից հիմնվում է «խելացի» անասնաչենք՝ հիդրոպոնիկ եղանակով կերերի արտադրամասով, ինչպես նաեւ «խելացի» ջերմատուն:

2023-2024 ուստարում դուրս համակարգով մասնաճյուղում ներդրվել են «Անասնաբուժություն» եւ «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությունները: Ըստ ուսումնական մասի վարիչ **Մերի Յուլյանի**՝ երկու մասնագիտություններով էլ ընդունելության արդյունքում ձեւավորվել են խմբեր:

«Դուրս համակարգի ներդրումը միջին մասնագիտական կրթական ծրագրում հնարավորություն կտա պատրաստելու մասնագիտական հմտություններով, ոլորտի գործատուների հետ համագործակցող, տարածաշրջանի ագրոպարենային համակարգը զարգացնելու ունակ ագրոտեխնոլոգիական ուղվածությամբ մասնագետներ: Մեր մասնաճյուղը, ընդգրկված լինելով ՄԱՎԵՏԱ ծրագրում, հնարավորություն է ստանում ավելի ոլորտին կազմակերպելու դուրս համակարգի ներդրման գործընթացը, քանի որ ծրագրի շրջանակում իրականացվող ընթացիկ թիմային աշխատանքների արդյունքում քարտեզագրվում են խնդիրները, առաջարկվում հստակ լուծումներ, դրանց կատարման ժամկետներ եւ ընթացակարգեր: Միաժամանակ, կատարվում է հսկայական աշխատանք՝ մասնագետների վերապատրաստումների, մասնագիտական կարողությունների զարգացման ուղղու-

թյամբ»,- մեզ հետ զրույցում նշում է Մերի Յուլյանը:

Նրա խոսքով՝ հստակ գիտակցելով դուրս ուսուցման ներդրման անհրաժեշտությունը եւ ընթացքում ծագող հնարավոր խնդիրները՝ Սիսիանի մասնաճյուղը ի դեմս մայր բուհի, ձեռնամուխ է եղել ստեղծելու ուսումնափորձարարական տնտեսություն տարբեր ենթակառուցվածքներով (խելացի անասնազոռ, գյուղմեքենատրակտորային կայան, ջերմատուն, ինտենսիվ այգի): Դրա արդյունքում ուսանողների համար որոշ գյուղատնտեսական մասնագիտությունների առումով մասնաճյուղը հանդես կգա որպես գործատու՝ հեշտացնելով դուրս համակարգի ներդրման ընթացքը:

«Դուրս համակարգի ներդրման գործունեւ ձեւերն արդեն արտադրում ունեն տարածաշրջանի մեր որոշ գործատուներ, որոնք մշտապես աջակցում են մասնաճյուղին եւ ուսանողներին՝ հնարավորություն տալով ուսումնական ծրագրերի գործնական մասն անցկացնել իրենց կազմակերպություններում»,- հավաստիացնում է մեր զրուցակիցը:

Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը հիմնադրվել է դեռեւս 1929 թ., որը մասնագետներ է պատրաստում գյուղատնտեսության ոլորտի եւ ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի համար: Քոլեջի տնօրեն **Արա Զորբանյանը** հավաստիացնում է իր ռազմավարական ծրագրին համապատասխան՝ քոլեջը նախատեսում է դառնալ տարածաշրջանային ոչ միայն կրթական, այլ նաեւ գիտական կենտրոն: «Այս առումով նախատեսվում է ընդլայնել համագործակցության շրջանակը ոչ միայն մասնագիտությունների ներսում, այլ նաեւ միջազգային կազմակերպությունների հետ»,- մեզ հետ զրույցում նշում է տնօրենը:

ՄԱՎԵՏԱ ծրագրի շրջանակում 2023-2024 ուստարվանից քոլեջում իրականացվում է դուրս կրթական ծրագրով ուսուցում հետևյալ մասնագիտությունների գծով՝ «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա», «Անասնաբուժություն», «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում»:

«Գյուղատնտեսական ոլորտի զարգացումը մեր երկրի առաջնահերթություններից է: Քոլեջի առաքելությունն է՝ տարածաշրջա-

նում գյուղատնտեսության ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող ու դրանց դիմանիկ փոփոխությունները հաշվի առնող մասնագետներ պատրաստելը: Ներդրելով դուրս ուսուցման ձեւը՝ մենք կնպաստենք երկրի գյուղատնտեսության համաչափ զարգացմանը: Դուրս կրթության համակարգը հնարավորություն կտա զարգացնել եւ արդիականացնել ինչպես գյուղատնտեսությունը, այնպես էլ մասնագիտական կրթությունը: Ուրախալի է, որ այս տարվա ընդունելության արդյունքում դուրս կրթական ծրագրով ներառված մասնագիտություններով ձեւավորվել է երկու խումբ՝ «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա» եւ «Անասնաբուժություն»,- փաստում է Արա Զորբանյանը՝ ընդգծելով, որ խմբերի ձեւավորմանը կնպաստել են ՄԱՎԵՏԱ ծրագրի շրջանակում «Ռազմավարական զարգացման գործակալություն» 74-ի հետ համատեղ իրականացված միջոցառումները՝ մասնագիտական օր, բաց դասեր, տեղեկատվական բուկլետներ:

2019-2020 ուստարվանից քոլեջում իրականացվել է աշխատանքի վրա հիմնված ուսուցում փորձնական կրթական ծրագրով՝ «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա» եւ «Անասնաբուժություն» մասնագիտություններով: Ըստ տնօրենի՝ կուրսակիցները դրական փորձը եւ արդյունքները կօգնեն դուրս կրթական ծրագրի հաջող իրականացմանը: «Մենք հաջողությամբ համագործակցել ենք մեր տարածաշրջանի գործատուների հետ, ծանոթ ենք խնդիրներին եւ կփորձենք լուծել դրանք: Դուրս համակարգի ներդրումը կնպաստի նաեւ քոլեջի դասախոսական անձնակազմի գործնական հմտությունների բարելավմանը, նյութատեխնիկական բազայի բարելավմանը եւ որակյալ կադրերի պատրաստմանը: «Ռազմավարական զարգացման գործակալություն» 74-ի աջակցությամբ ծրագրի շրջանակում քոլեջի դասախոսները մասնակցել են «Անասնաբուժություն» եւ «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման աշխատանքներին: Իրականացվել են մասնագիտական եւ մեթոդական վերապատրաստումներ մասնագետ դասախոսների եւ գործատուների համար»,- շեշտում է մեր զրուցակիցը:

Արա Զորբանյանն անդրադարձել է նաեւ ծրագրի ներդրման արդյունքում ի հայտ եկած մի շարք խնդիրների: Նրա խոսքով՝ ծրագիրը նոր է ներդրվում, սակայն քոլեջը, ունենալով աշխատանքի վրա հիմնված ուսուցման փորձը, հնարավոր ռիսկերը եւ խնդիրները որոշակիորեն գնահատել է: «Օրինակ՝ գործատուների համար մանկավարժության գծով վերապատրաստումները,

տրանսպորտային միջոցի բացակայությունը, արդի կրթական պահանջներին եւ կրթական չափորոշիչներին համապատասխան գործատուների արտադրական հնարավորությունը եւ այլն: Կարելի է նաեւ օրենսդրական դաշտի համապատասխանեցումը դուրս կրթական ծրագրի պահանջներին, ինչպես նաեւ գործատուների շահագրգռվածության խթանումը: Ծրագիրն ընթանում է բնականոն հունով, եւ արդեն իսկ իրականացման ընթացքում առաջացած հարցերն իրենց լուծումն են ստանում գործընկեր կազմակերպությունների հետ իրականացվող աշխատանքների արդյունքում: Աշխատանքների բարելավման նպատակով անհրաժեշտ է իրականացնել շարունակական վերապատրաստումներ եւ բարելավել նյութատեխնիկական բազան»,- փաստում է Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջի տնօրենը՝ կարելիությունները ինչպես ծրագրում ներառված կազմակերպությունների արդյունավետ աշխատանքը, այնպես էլ ՀՀ կառավարության օժանդակությունը:

Մեր զրուցակիցներից հետաքրքրվել ենք՝ կրթաբաշխական նոր քաղաքականությունն արդյո՞ք դրական ազդեցություն կունենա դիմորդների հոսքի վրա:

«Արտոնյալ կրթաբաշխական քաղաքականությունն անշուշտ դրականորեն է ազդել ինչպես ընդունելության ցուցանիշի, այնպես էլ ուսուցման գործընթացի վրա, եւ առաջիկայում կեւավորվի դիմորդների եւ ուսանողների համար մրցակցային դաշտ: Այդ մասին է վկայում արդեն իսկ այս տարվա ընդունելության ցուցանիշը: Պետք է նշեն, որ անասնաբուժություն մասնագիտությամբ մեր մասնաճյուղը չորս տարիների ընթացքում այս տարի առաջին անգամ է ձեւավորել խումբ»,- նշում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղի ուսումնական մասի վարիչ Մերի Յուլյանը:

«Կարծում ենք՝ այն խթան կհանդիսանա ուսանողների առաջադիմության եւ կրթական արդյունքի բարելավման համար, ինչպես նաեւ էական ազդեցություն կունենա այս ուղղություններով սովորող ուսանողների թվի աճի վրա՝ հաշվի առնելով, որ մեր քոլեջի ուսանողների մեծամասնությունը բնակվում են Տաշիր քաղաքում եւ տարածաշրջանի գյուղերում: Հետեւաբար, սոցիալական խնդիրներ կարգավորելու կարիք ունեն, մասնավորապես՝ տրանսպորտի եւ այլ սոցիալական խնդիրների»,- շեշտում է Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի տնօրեն Արա Զորբանյանը:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 80-ամյա հոբելյանի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը նախաձեռնել է «**ՀՀ ԳԱԱ – 80. հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները**» գիտական կոնֆերանսների շարքը, որի նպատակն է բացահայտել ՀՀ ԳԱԱ ծանրակշիռ դերը հայ արվեստագիտության զարգացման գործում: Շարքի 1-ին միջոցառումը Հայաստանի կոմպոզիտորների հետ համատեղ կազմակերպված «**ՀՀ ԳԱԱ – 80. հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները. Քրիստափոր Քուչնարյան**» երկօրյա գիտական կոնֆերանսն էր:

Հայ ականավոր երաժշտագետ, կոմպոզիտոր և մանկավարժ, Հայկական ՍՍՀ և Ուզբեկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Քրիստափոր Քուչնարյանը (1890-1960 թթ.) կանգնած էր հայկական ակադեմիական արվեստագիտության ակունքներում և 1944-1948թթ. ղեկավարել է ՀՍՍՀ ԳԱ երաժշտության պատմության և տեսության նորաստեղծ սեկտորը: Հենց այդ սեկտորի հիման վրա էլ 1948-ին ստեղծվեց ՀՍՍՀ ԳԱ Արվեստների պատմության և տեսության սեկտորը, իսկ 1958 թվականին՝ ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտը:

Գիտնականի «*Вопросы истории и теории армянской монодической музыки*» հիմնարար աշխատությունը (1958, Լենինգրադ) յուրաքանչյուր երաժշտագետի սեղանի գիրքն է:

Ք.Քուչնարյանը կարելու տեղ է գրավում սովետական երաժշտարվեստի կայացման ու զարգացման գործում մեծ դեր կատարած ականավոր գործիչների շարքում (երկար տարիներ դասավանդել է Լենինգրադի կոմսերվատորիայում):

Երաժիշտ-մտածող, գիտական և երաժշտական հետաքրքրությունների լայն շրջանակի տեր անձնավորություն՝ նա միաժամանակ խոշոր տեսաբան էր ու տաղանդավոր կոմպոզիտոր, ականավոր գիտնական-պոլիֆոնիստ և հրաշալի մանկավարժ, հետազոտող-ֆոլկլորիստ և երաժշտական-հասարակական անխոնջ գործիչ:

Քրիստափոր Քուչնարյանի անունով է անվանակոչվել Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գտնվող արվեստի դպրոցը, որի հետ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտն ամենօրյա սերտ կապերի մեջ է:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում գումարվեց «**ՀՀ ԳԱԱ – 80. հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները**» գիտական կոնֆերանսների շարքի 2-րդ միջոցառումը՝ նվիրված հայ անվանի երաժշտագետ և արվեստագիտության հմուտ կազմակերպիչ, ՀՍՍՀ Արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Գեորգ Գյոդակյանին** (1928-2015 թթ.):

Գեորգ Գյոդակյանն իր գիտական, գիտակազմակերպական, գիտամանկավարժական և երաժշտական-հասարակական ծանրակշիռ գործունեությամբ անուրանալի ավանդ է բերել հայ ակադեմիական արվեստագիտության (մասնավորապես՝ երաժշտագիտության) զարգացմանն ու առաջընթացին:

Կոնֆերանսը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը՝ Հայաստանի կոմպոզիտորների միության և Երեւանի Կոմիտասի անվան պետական կոն-



սերվատորիայի հետ համագործակցությամբ:

Գեորգ Շնավոնի Գյոդակյանը ծնվել է 1928թ. օգոստոսի 12-ին ՀՍՍՀ Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքում: 1928թ. նա ծնողների հետ տեղափոխվել է Երեւան, 1946-ին ոսկե մեդալով ավարտել Երեւանի Ֆ.Չերժինսկու անվան միջնակարգ դպրոցը և Երեւանի Պ.Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցը: 1951թ. Գ.Գյոդակյանը գերազանցությամբ ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոմսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական բաժինը (գիտական ղեկավար՝ պրոֆեսոր Գ.Տիգրանով), եղել Ստալինյան կրթաթոշակառու, իսկ 1952թ.՝ դաշնամուրային բաժինը (պրոֆեսոր Գ.Սարաջյանի դասարան): 1953-1956թթ. նա սովորել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում՝ ուսումնառությունն անցկացնելով Մոսկվայի Պ.Չայկովսկու անվան պետական կոմսերվատորիայում (տեսության ամբիոն, գիտական ղեկավար՝ պրոֆեսոր Բ.Յարուստովսկի):

1957-ին Գ.Գյոդակյանն աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ Արվեստների տեսության և պատմության սեկտորում (1958-ից՝ Արվեստի ինստիտուտ)՝ որպես կրտսեր գիտաշխատող: 1960-ին նշանակվել է ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտական քարտուղար: Խոյն թվականից մինչև կյանքի վերջին օրը նա Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ էր:

Գ.Գյոդակյանը 1961 թվականին պաշտպանել է դիսերտացիա՝ «Ռոմանոս Մելիքյան: Կյանքը և ստեղծագործությունը» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1964-ին Գ.Գյոդակյանին շնորհվել է ավագ գիտական աշխատակցի գիտական կոչում:

1965-ից մինչ կենաց վախճանը՝ 2015 թվականը, կես դար շարունակ, Գ.Գյոդակյանն Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի վարիչն էր. նրա հմուտ ղեկավարության շնորհիվ՝ Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժինը դարձավ Հայաստանի երաժշտագիտական

գլխավոր կենտրոնը:

1979-ին Գ.Գյոդակյանը նշանակվել է ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի դիրեկտորի՝ գիտական գծով տեղակալ՝ այդ պաշտոնում աշխատելով մինչև 2005-ը:

2005-2015 թթ. Գ.Գյոդակյանը ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդակազմն էր:

2007-ին Գ.Գյոդակյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Հայ դասական երաժշտության ձևավորման ուղիները» վերնագրով և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան:

Ծանրակշիռ է գիտնականի վաստակը հայ երաժշտության պատմության և տեսության հարցերի ուսումնասիրության ասպարեզում:

Հայրենական երաժշտագիտության կարելու հանգրվաններից են «Ակնարկ հայ երաժշտության պատմության» ուսումնասիրությունը (1963, համահեղինակներ՝ Ք.Կուչնարյան, Մ.Սուրադյան, Գ.Գյոդակյան), Գ.Գյոդակյանի «Пути формирования армянской музыкальной классики» և «Էջեր հայ երաժշտության պատմությունից» հիմնարար մենագրությունները, Տիգրան Չուխաճյանի, Կոմիտասի, Ռոմանոս Մելիքյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի և Արամ Խաչատրյանի ստեղծագործության վերաբերյալ նրա գիտական ուսումնասիրությունները:

Արժեքավոր է երաժշտագետի վաստակը չուխաճյանագիտության ասպարեզում: Հայ երաժշտական թատրոնի առաջնեկին՝ Տիգրան Չուխաճյանի «Արշակ երկրորդ» օպերային են նվիրված Գ.Գյոդակյանի՝ 1971-ին հայերեն և ռուսերեն լեզուներով լույս տեսած «Տիգրան Չուխաճյանը և «Արշակ երկրորդ» օպերան» աշխատությունը, ինչպես նաև «Пути формирования армянской музыкальной классики» և «Էջեր հայ երաժշտության պատմությունից» գրքերի համապատասխան գլուխները:

Ծանրակշիռ է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ներդրումը Կոմիտասի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության գործում, կոմիտասագիտության կայացման ու զարգացման գոր-

ծում: Արվեստի ինստիտուտի կոմիտասագիտության զարգացման մեջ անուրանալի ավանդ ունեցող երեք սյուներից մեկը՝ Մաթեոս Սուրադյանի և Ռոբերտ Աթայանի կողքին, հենց Գեորգ Գյոդակյանն էր:

Խոստումնալից էր Գ.Գյոդակյանի մուտքը կոմիտասագիտություն, որը տեղի ունեցավ Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի տարում՝ 1969-ին. հրատարակվեց «Комитас» մենագրությունը:

Կոմիտասագիտության նվաճումներից էր «Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը» հիմնարար հոդվածը, որն ավարտվում է հետեւյալ եզրակացությամբ. «Ակնառու են Կոմիտասի նորարարական սկզբունքները, որ բացահայտվում են ոչ միայն հայ ազգային երաժշտության շրջանակներում, այլև առավել լայն պլանով՝ համաշխարհային երաժշտական արվեստի զարգացման հեռանկարում: Կոմիտասը մեծ է, թերևս, ամենից առաջ այն բանով, որ սեփական՝ ազգային մշակույթի առավել հրատապ խնդիրների լուծումը կարողացավ բարձրացնել 20-րդ դարի ամբողջ երաժշտական արվեստի առջև ծառայած պրոբլեմների լուծման մակարդակին: Ընդ որում, նա ոչ միայն հենվում էր իր նախորդների և ժամանակակիցների փորձի ու նվաճումների վրա, այլև նրանց շարքում էր, ովքեր անմիջականորեն երաժշտական մտածողության որակապես նոր հիմքերն էին դնում»:

Հետագայում կոմիտասյան ժառանգության ուսումնասիրությունն ուղեկցեց Գ.Գյոդակյանին իր ողջ կյանքում: «Նշանավոր ճեմարանականների» առաջին հատորում տեղավորված՝ Կոմիտասի մասին հոդվածի հեղինակը վերստին Գ.Գյոդակյանն էր: Կոմիտասին էր նվիրված «Пути формирования армянской музыкальной классики» մենագրության ակնարկներից մեկը:

Գ.Գյոդակյանի «Կարապի երգը» դարձավ Կոմիտասի մասին անգլերեն ուսումնասիրության հրատարակումը:

Չայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները

սկիզբը՝ էջ 7

Կոմիտասին նվիրված իր հայերեն, ռուսերեն և անգլերեն մենագրություններով և գիտական հոդվածներով նա Կոմիտաս երեւույթը դուրս բերեց ազգային շրջանակներից և դիտարկեց 20-րդ դարի համաշխարհային մշակույթի համատեքստում: Նրա ջանքերով և գիտական խմբագրությամբ հրատարակվեցին Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության 7-14-րդ հատորները (1997-2006):


Մեծ է երաժշտագետի վաստակը հայկական ռոմանտի վարպետ Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործական գործունեության ուսումնասիրության բնագավառում: 1960-ին ՅՍՄՀ ԳԱ խմբագրական հրատարակչական խորհրդի որոշմամբ լույս տեսած «Ռոմանոս Մելիքյան. Կյանքը և ստեղծագործությունը մենագրության մեջ երաժշտագետն ուսումնասիրել է կոմպոզիտորի հիմնական ստեղծագործությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով ռոմանտի ժանրին, որտեղ առավելագույնս դրսևորվեց Ռ.Մելիքյանի ստեղծագործական դեմքը:

«Չայ երաժշտության ասպետի»՝ Ռ.Մելիքյանի ստեղծագործությունը մնաց հետազոտողի գիտական հետաքրքրությունների կենտրոնում: 1977-ին Գ.Գյոդակյանի խմբագրությամբ ՅՍՄՀ ԳԱ հրատարակչությունը լույս ընծայեց կոմպոզիտորի «Յոգվածներ, նամակներ, հուշեր» ժողովածուն, որտեղ նա նաև հեղինակել էր «Ռ.Մելիքյան՝ երաժշտական գործիչ և երգահան» հոդվածը: 2009-ին Գ.Գյոդակյանը կազմեց և հրատարակեց Ռ.Մելիքյանի անտիպ ռոմանոսներից մի քանիսը և պետերբուրգյան շրջանում գրված «Աշուն տողեր» վոկալ շարքը՝ կոմպոզիտորի լավագույն ստեղծագործություններից մեկը:

Շոշափելի է Գ.Գյոդակյանի վաստակը խաչատրյանագիտության մեջ: Նա կազմել է խմբագրել է (Ռաֆայել Ստեփանյանի հետ) 1972-ին ՅՍՄՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հրատարակած «Арам Хачатурян» հոդվածների ժողովածուն, «Արամ խաչատրյանը՝ սովետահայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր» թեմայով զեկուցումով մասնակցել է 1974թ. հոկտեմբերի 22-ին ՅՍՄՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, ՅՍՄՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Չայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած միացյալ գիտական նստաշրջանում, իսկ «Трагическое и новаторское в музыке А.Хачатуряна» և «Արամ խաչատրյանը և 20-րդ դարի երաժշտությունը» հոդվածներում քննության առնելով կոմպոզիտորի հարմոնիկ լեզվի առանձնահատկությունները՝ եզրակացրել է, որ «Արեւելյան լադային կառուցվածքների ու քրոմատիկ տոնայնության միաձուլումը Ա.խաչատրյանի ստեղծագործության մեջ գտնու է ինքնատիպ և զարմանալիորեն վառ մարմնավորում: Եվ միշտ այն հանդես է գալիս որպես օրգանական սինթեզ, անբակտեղի ամբողջություն, որտեղ մեղեդու արելեյան կերտվածքը բացահայտում է քրոմատիկ տոնայնությունը և ինքն էլ բացահայտում նրա միջոցով:»

Գ.Գյոդակյանի ամբիջակա մասնակցությամբ են կազմակերպվել ՅՍՄՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գումարած՝ Ա.խաչատրյանին նվիրված երկու գիտական նստաշրջանները (1974, 1984):

Գ.Գյոդակյանը հեղինակ է ավելի քան 150 գրքերի, մենագրությունների, գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել



Սարգիս Սարգյան. Բրիտանացի Բուլմանի դիմանկարը

ինչպես Չայաստանի, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ուկրաինայի, Գերմանիայի գիտական ժողովածուներում և հանդեսներում: Նրա գրչին են պատկանում քննադատական հրատարակատեսակների բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված ժամանակակից երաժշտության խնդիրներին:

Երաժշտագետը զեկուցումներով հանդես է եկել միջազգային և հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում: Նրա նախածեռնությամբ և գիտական խմբագրությամբ Արվեստի ինստիտուտում հրատարակվել են երաժշտագիտական հոդվածների ժողովածուներ, կազմակերպվել են մի շարք գիտական նստաշրջաններ:

Գ.Գյոդակյանը գիտական և գիտակազմակերպական արգասաբեր գործունեությունը համատեղել է հասարակական ակտիվ աշխատանքների հետ: 1959 թվականից Չայաստանի կոմպոզիտորների միության անդամ էր, 1968-1995թթ.՝ Չայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, 1973-1991թթ. վարել է ԳԿՄ վարչության երաժշտագիտության գծով քարտուղարի պաշտոնը: 1979-1991թթ. Գ.Գյոդակյանը ընտրվել է Խորհրդային Միության կոմպոզիտորների միության վարչության անդամ:

Մինչ այդ՝ 1973-ին, արժանացել է ՍՄՄԿ կոմպոզիտորների միության «За лучшую музыкально-критическую статью в газетах и журналах 1972 года» մրցանակին: 2008-ին նրան շնորհվել է Չայաստանի հայկական կոմպոզիտորների, Ռուսաստանի հայերի միության մրցանակը:

1988-2001 թթ. Գ. Գյոդակյանը եղել է «Լրաբեր հասարակական գիտություններ» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ, 1973-1989 թթ.՝ «Սովետական արվեստ» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ, Չայկական համառոտ հանրագիտարանի խմբագրական խորհրդի անդամ (1995-ից), «Երաժշտական Չայաստան» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ (1998-ից) և: 2000 թվականից նա Չունանիզմի պորբլեմների ակադեմիայի իսկական անդամ էր:

Գ.Գյոդակյանը զբաղվել է նաև մասնավորական գործունեությամբ, գիտական կարգերի պատրաստմամբ: 1973-ից նա դասավանդել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, 1977-ին նրան շնորհվել է դոցենտի, իսկ 1997-ին՝ պրոֆեսորի գիտական կոչումներ: Նրա գիտական ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել են

մի շարք թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Երկար տարիներ Գ. Գյոդակյանը ՉԳԱԱ արվեստի ինստիտուտի արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ էր:

Իր գիտական ու գիտակազմակերպական արդյունաշատ գործունեության համար 2003-ին և 2013-ին Գ.Գյոդակյանը պարգևատրվել է ՉԳԱԱ վաստակագրով, իսկ 2005-ին՝ ՉԳԱԱ պատվոգրով: 1980-ին նրան շնորհվել է ԳԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում, 2009-ին պարգևատրվել է ՉԳ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով, 2011-ին «Սովետա Խորենացի» մեդալով:

Գ.Գյոդակյանին նվիրված գիտական կոնֆերանսի մասնակիցներին և հյուրերին ուղղված ողջույնի խոսքում Չայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանն ընդգծեց այն կարևոր դերը, որ կատարել է Գեւորգ Գյոդակյանը՝ հանդիսանալով կապող օղակ Չայաստանի կոմպոզիտորների միության և Արվեստի ինստիտուտի միջև: Այդ կապը, որ խզվել էր վերջին տարիներին, վերջին շրջանում կրկին վերականգնվել է և օրեցօր ամրապնդվում է:

Ողջունելով կոնֆերանսի մասնակիցներին՝ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր Սոնա Դավիթյանիսյանը նշեց. «Գյոդակյանի աշխատությունները, հայ երաժշտագիտական բարձրագույն հետազոտություններ լինելուց բացի, մեր երախտավորների հետ իր ամենօրյա զրույցների վկայություն են, որը մեզ է փոխանցել նվիրյալ գիտնական ու հմայիչ մարդը, ով այսօր էլ ազատորեն խոսում է սերունդների հետ միանգամայն արդիական լեզվով:»

Գիտական կոնֆերանսին զեկուցումներով հանդես եկան ևս հայրենական երաժշտագիտության մեջ վաստակաշատ գիտնականի ներդրումը բացահայտեցին երաժշտագետ-մանկավարժի սանդուխտ Գ.Գյոդակյանը:


Գ.Գյոդակյանի ասպիրանտ, ՉԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, ՉԳԱԱ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Մհեր Նավոյանն ուրվագծեց Գեւորգ Գյոդակյանի գիտաստեղծագործական դիմանկարը՝ հրճաբաց բացահայտելով նրա երաժշտատեսական հայացքները:

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Չայաստանի կոմպոզիտորների միության անդամ, ՉԳԱԱ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու Արմեն Բուդաղյանը ներկայացրեց Գ.Գյոդակյանի գործունեությունը:

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիջակ վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանը «Գեւորգ Գյոդակյանի Կոմիտասականը» զեկուցման մեջ անդրադարձավ կոմիտասագիտության զարգացման գործում կոմիտասագետի ավանդին:

ՉԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Չայաստանի կոմպոզիտորների միության անդամ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Անահիտ Բաղդասարյանը զեկուցումը «Գեւորգ Գյոդակյանի Տիկինը. Ալինա Փախլեանյան. գիտնականը, մանկավարժը» թեմայով էր:

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Չայաստանի կոմպոզիտորների միության անդամ, արվեստագիտության թեկնածու Մհեր Սարգսյանը ներկայացրեց հայ երաժշտական միջնադարագիտության մեջ ունեցած Գ.Գյոդակյանի մեծարժեք ներդրումը:



Գեւորգ Գյոդակյան

յաստանի կոմպոզիտորների միության անդամ, ՉԳԱԱ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու Միխայիլ Կոկոսյանը զեկուցումը նվիրված էր Արամ խաչատրյանի «Սոնատ-երգի» վերլուծությանը:

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս Սեդա Շեյրաջյանը, ով Գ.Գյոդակյանի առաջին ուսանողն է եղել, բացահայտեց Գ.Գյոդակյանի երաժշտա-մանկավարժական մեթոդի առանձնահատկությունները:

Գ.Գյոդակյանի ասպիրանտ, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, Չայաստանի կոմպոզիտորների միության անդամ, արվեստագիտության թեկնածու Աստղիկ Մուշեղյանը ներկայացրեց հայ երաժշտական միջնադարագիտության մեջ ունեցած Գ.Գյոդակյանի մեծարժեք ներդրումը:

ՉԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյանի զեկուցումը նվիրված էր Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության գործում Գեւորգ Գյոդակյանի ունեցած մեծ ավանդին:

Կոնֆերանսի աշխատանքները եզրակացրեց Գ.Գյոդակյանի ասպիրանտ, ՉԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, Չայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական մասնաճյուղի ղեկավար, ՉԳԱԱ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը, որի բանախոսության նպատակն էր չուխաճանագիտության մեջ Գ.Գյոդակյանի ունեցած վաստակի արժեքները:

Կոնֆերանսի աշխատանքներին ներկա էին Գ.Գյոդակյանի ընտանիքի անդամները՝ տիկինը՝ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Չայաստանի կոմպոզիտորների միության անդամ, ՉԳԱԱ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու Ալինա Փախլեանյանը, որոնք՝ Ելենա Գյոդակյանը և թոռը՝ կոմպոզիտոր Դավիթ Գյոդակյանը:

ԱՆՆԱ ԱՍՍՐՅԱՆ
ՉԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն,
արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր



Երաժշտությանը բժշկելու արվեստը (հատված Սուրեն Գյուլխասյանի աշխատությունից)

Հեղինակի կողմից

Առ այսօր չբացահայտված գաղտնիք է մնում այն, թե ինչ է արվեստը, երաժշտությունը, ինչու է երբ է այն մեկ բուժում, մեկ էլ «խեղում» մարդուն, ինչ է կատարվում մեզ հետ, երբ մենք լսում ենք երաժշտություն կամ բանաստեղծություն, դիտում գեղարվեստական ֆիլմ, թատերական ներկայացում, նկար կամ քանդակ: Այդ հարցերի պատասխանը հակիրճ ձևակերպել է «Շողքամարտի» (արեւելյան մարտարվեստների հավաքական անվանումը - խմբ.) վարպետ, իմաստուն ծերունի եղբայր **Սերգիյը:**

«Արվեստի եւ բժշկության, երաժշտության եւ սիրո, ինչպես նաեւ ամբողջ Տիեզերքի շարժիչ ուժը ձգողականության ուժն է՝ գրավիտացիան, որը մետաֆիզիկական աշխարհի հարթության մեջ դրսևորվում է որպես ոգիների գրավիտացիա: Դրա հիմքում ընկած է երկնային կյանքի եւ Հայրենյաց տան կարողը, որից մարդը վտարվել է: Արվեստը, կարծես, վերադարձի ճանապարհի փնտրտուքի միջոց է, Տիեզերքի ձգողականության ուժերի հաղթահարումը՝ ոգու, բանականության, մարմնի եւ մերձավորների հանդեպ սիրո ձգողականության ուժերի միջոցով: Սրտի, ոգու եւ բնության կանչով ծնված Սերը մարդու բնական վիճակն է, նրա ոգիների ձգողականության շարժիչ ուժը եւ հոգեկոր հաղորդակցման պահանջը:

Արվեստը՝ անհատի վերապրած երջանկության զգացումը փոխանցելու պահանջն է եւ միջոցը: Հավատքի, բժշկության, արվեստի, առողջ հումորի եւ ծիծաղի մեջ անեն ճշմարիտը բժշկում է մարդու ոգին՝ բանականությունը եւ մարմինը ազատելով անգիտությունից, հիմարության եւ դրանց հետեւանքների վախերից: Այն վերադարձնում է մարդուն իսկական մարդկային էությանը ծնունդների եւ մահվան ճանապարհով՝ իրենից դեպի ինքը, բանականությունից դեպի խիղճը, այն լուսավորելով ճշմարտության, այդ թվում նաեւ արվեստի լույսով:»

Եթե իմաստուն ծերունու պատասխանը բավարարեց ձեր հետաքրքրասիրությունը, կարող եք չչարունակել կարդալ: Շարունակությունը ընդամենը նրա պատասխանը հայտնի գիտական տեսությունների եւ գործնական կյանքի միջոցով «վերձանելու» փորձ է: Ես ստիպված էի կատարել վիրաբույժի (երբեմն էլ դիախեթի) աշխատանք՝ սուր նշտարով կտրելով «երկնային պարզելի» արվեստի փխրուն մարմինը: Հուսով եմ, որ գիտությանը եւ արվեստի մատուցած կրկնակի գոհաբերությունը կլինի ոչ ապարդյուն, իսկ գուցե նաեւ՝ ի բարօրություն:

Նախաբան

Ըստ անտիկ բժշկության հիմնադիր Հիպոկրատի՝ «Բժշկությունը բնության ապաքինիչ հատկությունը մեծանկելու արվեստ է, որի նպատակն է մտորումների եւ երեակայության միջոցով հասկանալ եւ պատկերացնել, բուժել եւ կանխարգելել հիվանդությունները, պահպանել եւ ամրացնել առողջությունը»: Արվեստում եւ բժշկության մեջ առկա են երեակայության տարրեր, որոնք, զուգորդվելով, հանգեցնում են ստեղծարարության: Ինչպես եւ կյանքում, այստեղ անեն բան միաժամանակ եւ բարդ է, եւ պարզ: Բժշկության եւ արվեստի բարդ խնդիրները կարող են ունենալ բազմադարյան փորձի վրա հիմնված պարզ եւ իմաստուն լուծումներ, ինչպես բարդ թվացող հանելուկների պարզ պատասխանները եւ կյանքի բարդ իրավիճակների հանգուցալուծումները: Երբեմն, որքան հանելուկը բարդ է, այնքան դյուրին է նրա մեկնությունը («պարզի մեջ բարդը գտնելով՝ կգտնես պարզը բարդի մեջ»):

Հնուն վանականները կիրառել են

երաժշտությունը զանազան հիվանդությունների բուժման համար՝ համոզված լինելով, որ դրանք կյանքի սխալների հետեւանքներ են:

Առողջության վրա երաժշտության ազդեցության վերաբերյալ հարցերի պատասխանները ստանալու համար անհրաժեշտ է, ելնելով գիտական սահմանումներից, պարզել այնպիսի եզրերի իմաստը, ինչպիսիք են *մարդը, առողջությունը, արվեստը* եւ *երաժշտությունը*: Գրականության մեջ ես չեմ հանդիպել այդ հարցերի սպառիչ պատասխանները, ինչի պատճառով ստիպված էի դիմել անտիկ փիլիսոփաների, իմաստասերների, տարբեր ժամանակների եւ դավանանքների բժիշկների աշխատություններին, իսկազից եւ անխելք մարդկանց, երեխաներին, հայելուն, բնությանը եւ նրա բնակիչներին:

Իմ փնտրումների եւ առօրյա կյանքից վերցրած «*Նյութերի բացահայտման*» գործնական փորձերի եւ դրանց արդյունքների վերլուծության ժամանակ ես առաջնորդվել եմ «*ազատ տեսական որոնումների*» ռազմավարությամբ եւ «*մարտական հետախուզում*» մարտավարությամբ: Անհամեստություն ունեն մտածելու, որ հետազոտությունների իմ ընտրած ճանապարհին հավանություն կտար 11-րդ դարի մատենագիր եւ փիլիսոփա Հովհաննես Իմաստասերը, ով համարում էր, որ արվեստին նվիրված մարդու համար լավագույն ուսուցիչը բնությունն է:

«*Բան իմաստութեան*» քերականումն նա երաժշտությունը համարում է սովորույթի գեղարվեստ, որ ծագում է զարգանում է որպես բնությունը մեծանկելու եւ բնությունից սովորելու մարդկային ձգտման անմիջական արդյունք: Եվ ի դեմս բնության, ունենալով գեղեցկության ու բարձրագույն ներդաշնակության հավերժական, իր համապարփակությամբ անհասանելի մի տիպար, վերջինիս հասնելու ձգտման մեջ ձեռք է բերում կատարելագործման հավիտենապես գործող հզոր ազդակներ:

Ով է բանական մարդը

Բանական մարդու ստեղծած արվեստը, երաժշտությունը, բժշկությունը եւ ստեղծարար այլ արդյունքները հասկանալու համար հարկ է պատասխանել այն հարցին, թե ով է բանական մարդը: Այդ հարցի փնտրումները բերում են մեզ անտիկ փիլիսոփայության անկուքներից: Ըստ Արիստոտելի՝ գիտությունները լինում են գործնական եւ տեսական: Գործնական գիտություններն ուսումնասիրում են առօրյա կյանքի մեր սեփական գործողությունները եւ բաժանվում են ըստ կառավարման երեք օբյեկտների՝ մարդկանց խմբակցության, տան եւ մարդու կողմից ինքն իրեն կառավարման: Տեսական գիտություններն ուսումնասիրում են երեւույթների օրինաչափությունները, «իրերի լինելիության վիճակները» եւ բաժանվում են հետեւյալ տեսակների:

- **Պարզագույն կարգի գիտություններ**՝ ֆիզիկական, քիմիական, կենսաբանությունը, որոնք ուսումնասիրում են բնության երեւույթների օրինաչափությունները: Դրանց է դասվում նաեւ բժշկությունը, որպես նշված գիտական առարկաներն ընդգրկող համակարգ:

- **Միջին կարգի գիտություններ**՝ մաթեմատիկական, որն ուսումնասիրում է թվերի եւ թվերի միջոցով բացահայտվող երեւույթների օրինաչափությունները:

- **Բարձր կարգի գիտություններ**՝ մետաֆիզիկական, որն ուսումնասիրում է բնությունից դուրս գտնվող երեւույթների օրինաչափությունները, որոնք նյութի եւ շարժման կարիք չունեն, չեն ենթարկվում նյութական աշխարհի օրինաչափություններին եւ կախված չեն դրանցից: Մետաֆիզիկական գործ ունի այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են ճշմարտությունը, բանա-

կանությունը, հոգին, ոգին, խիղճը եւ դրանց դրսևորումները կյանքի դինամիկայում:

Homo sapiens

Homo sapiens-ը՝ կենդանիների 7-րդ դասի ներկայացուցիչը, համաձայն Արիստոտելի մետաֆիզիկական ուսմունքի, կազմավորվել է հոգեւոր, մտավոր եւ ֆիզիկական մարմինների (այն է՝ հոգու, բանականության եւ մարմնի) համակեցության արդյունքում: Այդ երեք մարմինները բնութագրում են մարդուն իբրեւ անհատի եւ անուր կապված են միմյանց հետ՝ ձեւավորելով **Բանական մարդու** անհատականությունը:

Խղճի միջոցով հոգին վերահսկում է անձի բանականությունը: Ըստ Իբն Սինայի, ոգու ուժերի միջոցով հոգին վերահսկում է նաեւ մտավոր մարմնի՝ ենթագիտակցության տիրույթը՝ իր ենթակայության տակ գտնվող կենդանական բնագոյների եւ ֆիզիկական մարմնի բջիջների հետ միասին: Հոգեւոր մարմինը որոշում է ընդունում, իսկ ֆիզիկական մարմինը ի կատար է ածում այն՝ ենթարկվելով մտավոր մարմնի հրահանգներին:

Համաձայն բնության կողմից նախանշված ծրագրի՝ Բանական մարդու անհատը կազմված պետք է լինի մաքուր խղճի, առողջ բանականության եւ մարմնի համակեցության ներդաշնակությամբ: Մտավոր առողջ հողի վրա աճեցված առողջ բանականության ծառի վրա խղճի կողմից փոշոտման արդյունքում հոգին տալիս է մարդկայնության պտուղներ:

Ֆիզիկական մարմինը բանականության հրամաններով կատարում է հոգեկան մարմնի կանգը: Այն արտադրում է վերարտադրողական բջիջներ՝ ձվաբջիջներ կամ սպերմատոզոիդներ, որոնք իրենց մեջ կրում են անհատի եւ նրա օրգանիզմի մասին ժառանգականության տեղեկատվություն: Ֆիզիկական մարմնի մի հատված՝ գլխուղեղի կեղեւը, հանդիսանում է բանականություն արտադրող գիտակցության տիրույթ: Ըստ Իբն Սինայի, բանականությունը ծառայում է հոգեկան մարմնի (*հոգու*) պաշտպանությանը՝ անհատին հետ պահելով ամոթալի արարքներից եւ ճակատագրական սխալներից:

Ֆիզիկական մարմինը մայր բնության արգասիքն է, որն ամբողջովին ենթարկվում է մտավոր մարմնին, ջանասիրաբար կատարում է թագավորի բանականության, եւ թագուհու՝ կենսագործունեության ավտոմատ կառավարման ներքիննորալ համակարգի հրամանները:

Բանական մարդու անհատականությունն անկրկնելի է: Նրա նույնիսկ ամենապարզ բաղադրիչը՝ ֆիզիկական մարմինն անկրկնելի է: «*Մայրական հավաքման արտադրամասում*» կատարվող ձեւավորումը տեղի է ունենում անհատական ժառանգական գծագրերի հիման վրա՝ ծնողներից (գերագնացապես հայրական կողմից) ստացված 23 զույգ քրոմոսոմների համադրությամբ: Երկրագնդի բնակչությունը, որի դեպքում տեսականորեն կարող է ի հայտ գալ մեզանից որեւէ մեկի բացարձակ ֆիզիկական մեծանկել, հավասար է 23 զույգ քրոմոսոմների համադրության տարբերակների թվին:

Բոլոր անհատներն անկրկնելի են իրենց ֆիզիկական մարմնի տեսակետից, ինչպես աստղերը եւ երկնքից իջնող ձյան փաթիլները: Առավել եւս նրանք անկրկնելի են բանականությամբ եւ հոգով, որոնք սահմանափակված չեն քրոմոսոմների թվի նյութական շրջանակներով:

Ֆիզիկական մարմինը կարելի է համեմատել պետության հետ՝ իր ժողովրդով (բջիջներով), որոնք պաշտպանված են «*մաշկային*» սահմաններով: Պետության (օրգանիզմի) թագավորը՝ բանականությունը, վերահսկում է ենթագիտակցությունը, այսինքն՝ օրգանիզմի թագուհուն (ներքիննորալ

մորալ համակարգը), եւ վերջինիս օգնությանը՝ նրան երկրպագող ամբողջ ժողովրդին (օրգանիզմի բջիջները):

Բանական մարդու անհատականությունը գոյանում է նրա երեք մարմինների ներդաշնակ համադրությամբ: Այդ մարմինների հաղորդակցման ճանապարհին անցնում է սրտով, որը նրանց կապում է իրար սիրո միջոցով:

Սիրտը՝ սիրո օրգանն է եւ ֆիզիկական մարմնի կարեւորագույն մասը, որտեղ գետեղված է հոգու տաճարը՝ իր տիրոջ հետ միասին: Այնտեղից հոգին անդադար տքնում է «*աղթում է*» թագավորության բարօրության համար:

Խիղճը՝ անհատի հոգու արգասիքն է, ներքին ձայնը եւ աղոթքը, նեկտարը, մարդայնության չափիչը, որը բնութագրում է անհատի որակը: Գտնվելով գլխի եւ ֆիզիկական մարմնի մնացած օրգանների միջեւ (թե՛ անատոմիական, եւ թե՛ ֆունկցիոնալ տեսակետից), սիրտը հանդես է գալիս որպես դեմոկրատական իշխանության մարմին՝ օրենսդիր եւ գործադիր թեւերի միջեւ եւ վերահսկում է մտավոր եւ ֆիզիկական մարմինների աշխատանքը:

Սրտի մեջ տեղակայված է խղճի կենսաբանական ընկալիչ՝ վթարային ապահովիչով, որը գործի է դրվում բանականության գործողությունների պլաններում եւ նախագծերում խղճի պակասի ի հայտ գալու դեպքում: Այն զգայուն է ոչ միայն բանականության հրամանների այլասերվածության, այլեւ ֆիզիկական մարմնի կողմից դրանց իրականացման նկատմամբ: Ապահովիչի գործարկման որակական եւ քանակական պարամետրերը սահմանվում են հոգու կողմից ինքնուրույնաբար եւ մեծությամբ կարող են ավանդորդել տարբեր անհատների մոտ: Հոգին բնագործար (ենթագիտակցորեն) է ընտրում խղճի ապահովիչի գործարկման «*նշածող բարձրությունը*»՝ կախված գեներտիկորեն ժառանգած ոգու ուժից: Խղճի ապահովիչի գործարկման նշածողը հենվում է անձի հոգու պատվախնդրության եւ այն պաշտպանող բանականության վրա:

Մտավոր մարմինը բաղկացած է գիտակցությունից եւ ենթագիտակցությունից, որոնք անհատի մեջ ներկայացված են վերջիններիս արտադրանքով՝ բանականությամբ եւ բնավորությամբ: Գիտակցությունը գլխուղեղի կեղեւի՝ բանականություն արտադրելու հատկությունն է, որը հիմնված է կուտակված կենսափորձի վերլուծության վրա եւ կատարվում է մտահայեցողությամբ: Ենթագիտակցությունը կազմվում է բնավորությամբ՝ հասունացող մանկական գիտակցության արգասիքով, եւ օրգանիզմի ամբողջ բջջային համակարգի կենսագործունեության ավտոմատ կառավարման ներքիննորալ համակարգով:

Բնավորությունը ենթագիտակցության «*պաշտպանիչ խեժն*» է՝ բանական մարդու «*ծագուկի*» անհատի արթնացող գիտակցության մեջ: Վաղ մանկուց այն ծառայում է հոգու պաշտպանությանը՝ մինչեւ տեղի կունենա գիտակցության լիարժեք արթնացում: Բնավորությունը հիմնված է ապրած կյանքի առաջին տպավորությունների վրա եւ ձեւավորվում է «*հոգեւոր մարմնի*»՝ նոր անձանոթ միջավայրին հարմարվելու ընթացքում: Անհատի կողմից կենսափորձի ձեռքբերմանը զուգընթաց բնավորությունը դառնում է հիմք բանականության կառուցման համար:

Բանականությունը մարդու գլխուղեղի մտածողության մետաֆիզիկական արգասիքն է, որն արտադրում է գլխուղեղի կեղեւը՝ շրջակա միջավայրում կյանքի երթուղու որոնումների ժամանակ ավելի լավ կողմնորոշվելու եւ անցած կյանքերի ընթացքում գործած սխալներն ուղղելու համար:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 33 Տավուշի մարզի «Կայանի Գոպաններ Գինոլյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասավարի (17 դասաժամ) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլին անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» 33 օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավարից եւ աշխատանքային գործույթի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ 33-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- 33 արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 9-ին՝ ժամը 15:00-ին, 33 Տավուշի մարզի Կայանի Գոպաններ Գինոլյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գ. Այգեհովիտ, 45-րդ փ., 1-ին փակուղի, թ. 4:

Տեղեկությունների համար գանգահարել՝ (098) 35-21-89 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 33 Արարատի մարզի «Դվինի Լ. Ազգալոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (12 դասաժամ), երաժշտության (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլին անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» 33 օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավարից եւ աշխատանքային գործույթի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ 33-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- 33 արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 10-ին՝ ժամը 14:00-ին, 33 Արարատի մարզի Դվինի Լ. Ազգալոյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գ. Դվին, Օրբելի 14:

Տեղեկությունների համար գանգահարել՝ (077) 02-29-82 հեռախոսահամարով:

ՁԱՆԱԶՁԱՆՔ

Երաժշտությանը բժշկելու արվեստը

(հատկաձ Սուրեն Գյուլխասյանի աշխատությունից)

սկիզբը՝ էջ 9

Մանուկ երեխայի բանականության հիմքը՝ բնավորության ձևավորման վրա առավելապես ազդում է տան հոգեւոր և հուզական միջավայրը: Բացասաբար է ազդում այն, որ հարգատները՝ ծնողները, ազգականները, հարեւանները, հյուրերը չեն հասկանում նրա լացի «լեզուն»: Բնավորությունն արտացոլում է մանկիկի պայքարը հոգու ազատության համար իր կամքի ուժով, որը նա ստացել է նախնիներից ժառանգական հիշողության և նախնի կյանքերի կենսափորձի շնորհիվ: Վաղ տարիքից եւ ամբողջ կյանքի ընթացքում բնավորությունը «բեռնվում է» անհատի ուսերին: Աճձը այն կրում է իր հոգում՝ որպես մանկության հիշողություններից մնացած սպի: Բնավորությունը եւ բանականությունը հոգում կուտակված մարդկայնության հետ համատեղ բնութագրում են բանական մարդուն իրրեւ անհատի:

Անհատի իռաձնվածքի այս բարդ համակցությունը առավել տեսանելի է նկարչին, որն այդ երեք մարմինների միասնության մեջ իր «երրորդ աչքով» փնտրում, գտնում եւ մարդկանց դատին է համեմատում անհատի «իրական դեմքը»: Նկարիչը կտավի վրա ձգտում է պատկերել անհատի իրական դեմքը իր ներաշխարհով հանդերձ, ցուցադրելով հոգին բնավորության ֆոնի վրա՝ ֆիզիկական մարմնի տեսքով:

Իմ ազգականուհին պատմում է, թե ինչպես է ցնցվել՝ տեսնելով իր դիմանկարի վրա աշխատող նկարչի տվայտանքները: «Նա, կարծես, վերացած լինելու իրականությունից: Կտավին մոտենալուց առաջ մոտ 15 րոպե ծանր շնչելով նայում էր ոչ թե ինձ, այլ, կարծես, իմ միջով: Հետո սկսեց նկարել, թվում էր, թե առանց ինձ նայելու: Նկարում էր մի քանի օր: Առաջին օրվա երկժամյա սեանսից հետո ես տեսա, որ կտավից հորաքույրս է ինձ նայում: Երկրորդ օրվա դիմանկարում ես նման էի պայսիս: Եվ, վերջապես, երբ նա մի քանի օր հետո գործը ավարտեց, տեսա մի կնոջ պատկեր, որը, հավանաբար, ես էի»:


Նույն ազգականուհիս պատմում է, որ այդ նկարիչը նկարել է իր ութ տարեկան դստեր դիմանկարը, որը տարօրինակ հատկություն ուներ: Որքան երեխան մեծանում էր, այնքան նմանվում էր իր այդ դիմանկարին:

Կենդանի էակների շփումը կյանքի գոյության անհրաժեշտ պայմաններից մեկն է: Կենդանիների ներտեսակային շփումները հիմնված են միայն կենդանական բնազդների վրա: Նրանց ամբողջ կյանքը ենթարկվում է միայն ֆիզիկական մարմնի պահանջների բնագրային բավարարմանը: Բնազդների դասակարգման համար կան տարբեր մոտեցումներ: Ըստ առավել տարածված մոտեցման հիմնական բնազդները լինում են սննդային, պաշտպանական և սեռական: Կենդանիները, կարծես, իրենց ֆիզիկական մարմնի կենդանական բնազդների ստրուկները լինեն, քանի որ նրանց մտավոր մարմինը աշխատում է միայն մարմնի պահանջների բավարարման ուղղությամբ:

Այդպես է ծրագրավորված բոլոր կենդանի արարածների կյանքը: Բացառություն է կազմում բանական մարդը: Միայն նրան է վերապահված ազատ ընտրության իրավունքը կենդանական կամ բանական մարդկային կյանքի միջև: Սա է մարդկային ցեղի եւ մնացյալ կենդանի էակների ճակատագրերի տարբերությունը:

Մարդկանց շփումը, բացի «բնության կանչից», պայմանավորված է «բանականության եւ սրտի կանչով»: Հոգով օժտված բանական մարդը ամենաստացիալական կենդանի էակն է, որը բոլորից շատ կարիք ունի ներտեսակային, հատկապես՝ հոգեւոր շփման: Այն բնության կողմից բանական մարդու մեջ ներդրված հատուկ պահանջ է, որը նպաստում է նրա զարգացմանը:

Հոգեւոր շփումը հիմնված է ամբողջ Տիեզերքում գործող ձգողականության օրենքի՝ գրավիտացիայի վրա: Մետաֆիզիկական հար-



թության մեջ գրավիտացիան դրսևորվում է համամարդկային հոգեւոր ձգողականությամբ: Սերը հոգիների գրավիտացիայի շարժիչ ուժն է: Անհատների բնագրային հոգեւոր շփումը տեղի է ունենում սրտի, բանականության և բնության միացյալ կանչով:

Նույնիսկ մանուկները շփման առաջին իսկ րոպեներից շտապում են միմյանց փոխանցել հոգին հուզող մտքերը եւ առաջին հերթին՝ իրենց տանջող վախերը: Երեխաները դա անում են ենթագիտակցաբար՝ ցանկանալով ազատվել դրանցից և վերականգնել կորցրած հոգեկան անդորրը: Մեծահասակները նույնպես օգնության կարիք են ունենում, երբ հոգին ծանրացած է եւ պետք է «քարը զցել սրտից»: Նրանք դիմում են ընկերներին, մտերիմներին, հոգեբաններին, հոգեւորականներին, բնությանը, գուշակներին, փնտրում զանազան զվարճություններ: Անցնելով ծանր փորձությունների միջով, «քարը սրտից զցելով» եւ, զգալով ստացած օգնության ուժն ու զինը, բանական մարդիկ ջանում են օգնել մտերիմներին հաղթահարել նույն դժվարությունները եւ չկրկնել նույն սխալները:

Հոգեւոր փոխօգնությունը բանական մարդու հոգու բնագրային պահանջներից է իր երջանկության փնտրտուքների ճանապարհին: Մարդու կյանքի նպատակը ընտրում է հոգին, բովանդակությունը՝ բանականությունը, իսկ կյանքի ռիթմը՝ բնավորությունը: Ուժեղ ոգու, կանքի եւ բնավորության, առողջ բանականության եւ ֆիզիկական մարմնի համադրությունը հանդիսանում է կյանքում անհատի հաջողության գրավականը՝ իր ընտրած նպատակին հասնելու ճանապարհին:

Հոգին պահանջում է հոգեւոր շփում՝ միաժամանակ ունենալով պաշտպանության կարիք: Նրա անվտանգությունն ապահովում է գիտակցության արգասիքը՝ բանականությունը: Իսկ հոգու ազատությունը հոգեւոր շփման ժամանակ ապահովում է ինտուիցիան հոգեւոր ինքնապաշտպանության բնագրով: Այսպիսով, մարդու չորրորդ հոգեւոր ինքնապաշտպանության բնագրը, խթանում է հոգեւոր ինքնապարտապահությունը: Բնագրային հոգեւոր հաղորդակցությունը՝ կրոնների եւ արվեստի միջոցով: Այն բնորոշ է միայն բանական մարդուն՝ միակ կենդանի էակին, որին Արարիչն օժտել է սուրբ ոգու մասնիկ պարունակող մարդկային հոգով: Այդ բնագրը պաշտպանում է մարդկային անհատի բանականության ծառի վրա աճած մարդկայնության պտուղները: Հոգեւոր կատարելագործումը պահանջում է մարդու հոգու եւ գիտակցության ազատագրում այն ամենից, ինչը խանգարում է այդ ընթացքին: Արվեստի նկատմամբ մարդու եւ հասարակության պահանջը պայմանավորված է հոգեւոր զարգացման ձգտումով, որն իր հերթին նպաստում է բանականության եւ մարմնի զարգացմանը:

Չարագացման համար անհրաժեշտ է հոգու ազատություն եւ առողջ բանականություն, որոնք սնուցվում են կամքի ուժով եւ անհատին բարձրացնում են վերգիտակցական՝ հոգեւոր մակարդակի վրա: Կամքի ուժն անհրաժեշտ է անհատին սեփական անձի կենդանական էության, եսասիրության ստվերի, անհոգի անսեր կենդանական ձգտումների հետ կռիվ տալու համար:

Բանական մարդու ներտեսակային սոցիա-

լական հաղորդակցության հիմնական միջոցը խոսքն է: Խոսքի միջոցով մեծ ծավալի ինֆորմացիայի փոխանակման հնարավորությունը, տեսական մանկությունը, վերարտադրման տեմպերի դանդաղումը եւ գենետիկական առանձնահատկություններն ընկած են բանական մարդու էվոլյուցիայի հիմքում: Միայն բանական մարդուն են հասու խոսքի եւ ինտուիցիայի միջոցով հոգեւոր, այդ թվում արվեստի, ինֆորմացիա փոխանցելու կարողությունը:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ բանական մարդը անհատ է, որը բաղկացած է հոգեւոր, մտավոր եւ ֆիզիկական մարմիններից, որոնք սրտի սիրո կենարար ուժով միակցված են հոգու, բանականության եւ մարմնի ներդաշնակ միացությամբ: Անհատը ներկայացված է ֆիզիկական մարմնով, որը հոգու կողմից ընտրված նպատակի ճանապարհին կառավարվում է բանականությամբ: Մարմինը ծառայում է բանականությանը, վերջինս էլ հոգուն՝ այն պաշտպանելով սխալներից:

Հոգին իր մեջ կրում է Արարչի շնորհած Սուրբ ոգու մի մասնիկ: Հոգեւոր շփման ընթացքում բանականությունը եւ հոգեւոր ինքնապաշտպանության բնագրը պահպանում են հոգին հավատքի եւ Արվեստի միջոցով: Մետաֆիզիկայի տեսանկյունից, բանական մարդու ունի Սարդ անգետ ենթաբանակ, որը կենդանական աշխարհի էվոլյուցիոն սանդղուքի վրա զբաղեցնում է միջանկյալ տեղ մարդու եւ մարդանման կապիկի միջև:

Որքան փոքր է հոգին, այնքան այն պակաս խոցելի է, ուստի՝ ավելի քիչ կարիք ունի ամուսնանալ, ավելի նվազ է հոգեւոր ծարավը եւ այն հագեցնելու ձգտումը: Քանի որ «մարդ անգետ» վայրի ենթատեսակի հոգեւոր մարմինը ավելի քիչ մարդկայնություն է պարունակում, նրա հոգեւոր մարմինը ավելի քիչ պաշտպանության կարիք ունի: Ուստի, այն պաշտպանող 4-րդ՝ հոգեւոր ինքնապաշտպանության բնագրը թերի զարգացած է, ինչն էլ անդրադառնում է կյանքի եւ արվեստի նկատմամբ նրա վերաբերմունքի վրա:

Այս տեսակի բանականության ծառի պտուղները պարունակում են ավելի քիչ կենսախիութ՝ մարդկայնություն, իսկ պտուղների համը փչացնում է տգիտության եւ հիմարության դառնությունը: Մարդու գիտակցության համար տգիտությունը եւ հիմարությունը ամենավտանգավոր «վարակիչ» հիվանդություններն են, որոնք փոխանցվում են վախի «վիրուսների» եւ հիմարության «մանրէների» միջոցով: Նրանք խոցում են կրթության եւ գիտակցությունը եւ ինքնապաշտպանության բնագրով: Այսպիսով, մարդու չորրորդ հոգեւոր ինքնապաշտպանության բնագրը, խթանում է հոգեւոր ինքնապարտապահությունը: Բնագրային հոգեւոր հաղորդակցությունը՝ կրոնների եւ արվեստի միջոցով: Այն բնորոշ է միայն բանական մարդուն՝ միակ կենդանի էակին, որին Արարիչն օժտել է սուրբ ոգու մասնիկ պարունակող մարդկային հոգով: Այդ բնագրը պաշտպանում է մարդկային անհատի բանականության ծառի վրա աճած մարդկայնության պտուղները: Հոգեւոր կատարելագործումը պահանջում է մարդու հոգու եւ գիտակցության ազատագրում այն ամենից, ինչը խանգարում է այդ ընթացքին: Արվեստի նկատմամբ մարդու եւ հասարակության պահանջը պայմանավորված է հոգեւոր զարգացման ձգտումով, որն իր հերթին նպաստում է բանականության եւ մարմնի զարգացմանը:

Քարոզման համար անհրաժեշտ է հոգու ազատություն եւ առողջ բանականություն, որոնք սնուցվում են կամքի ուժով եւ անհատին բարձրացնում են վերգիտակցական՝ հոգեւոր մակարդակի վրա: Կամքի ուժն անհրաժեշտ է անհատին սեփական անձի կենդանական էության, եսասիրության ստվերի, անհոգի անսեր կենդանական ձգտումների հետ կռիվ տալու համար:

Բանական մարդու ներտեսակային սոցիա-

(շարունակելի)

Սուրեն ԳՅՈՒԼԽԱՍՅԱՆ



Մրցույթի հրավեր

Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ ՀԱԱՀ ռեկտորի (տնօրենի) թափուր պաշտոնի համար:

Մրցույթին կարող են մասնակցել գիտական աստիճան, բուհում գիտամանկավարժական գործունեության եւ առնվազն 10 տարվա հանրային ծառայության կամ բարձրագույն կրթության համակարգում 5 տարվա վարչական աշխատանքի փորձ ունեցող անձինք:

ՀԱԱՀ ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդների առաջադրման, ընտրությունների անցկացման եւ ռեկտորի նշանակման կարգը սահմանվում է Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգով, որին կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ազրարային համալսարանի պաշտոնական կայքէջի **փաստաթղթեր** բաժնում` <https://anau.am/documents/>:

Հայաստանի ազգային ազրարային համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը`

- ա) դիմում ՀԱԱՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդի նախագահի անունով, որը պարունակում է նաև կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը,
- բ) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- գ) երկու լուսանկար` 3x4 չափսի,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) բարձրագույն կրթության դիպլոմի եւ գիտական աստիճանը հավաստող վկայականի պատճենները,
- զ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- է) քաղվածք աշխատանքային գրքուկից,
- ը) հրատարակված գիտական աշխատանքների ցանկ,
- թ) բնութագիր վերջին աշխատավայրից (դիմողի ցանկությանը),
- ժ) ՀԱԱՀ զարգացման հայեցակարգ/հավակնորդի գործունեության ծրագիր:

Մրցույթին մասնակցելու համար դիմումի փաթեթը (բոլոր փաստաթղթերը համարակալած եւ յուրաքանչյուր էջի հետնամասում ստորագրած) պետք է ներկայացնել Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարին` **մինչև 2023 թ. նոյեմբերի 20-ը ներառյալ (բացի շաբաթ, կիրակի եւ հանգստյան օրերից)` ժամը 10:00-ից 16:00-ն**, հասցեն` Երևան, Տերյան 74, Հայաստանի ազգային ազրարային համալսարանի 1-ին մասնաշենք, 1-ին հարկ, 105 սենյակ:

Փոստային առաքման դեպքում փաթեթը պետք է լինի փակ եւ չխաթարված կնիքով: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար **Նուրե Սիմոնյանին** (հեռախոս` (077) 41-77-40, էլեկտրոնային փոստի հասցեն` nqsimonyan@anau.am):

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. դեկտեմբերի 1-ին` ժամը 14:00-ին**, Հայաստանի ազգային ազրարային համալսարանի ռեկտորատի նիստերի դահլիճում (հասցեն` Երևան, Տերյան 74):

Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Սիփանիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասավարի (19 դասաժամ), ֆիզիկայի (6 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), տեխնոլոգիայի (3 դասաժամ), քիմիայի (6 դասաժամ), աշխարհագրության (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

- Մրցույթն անցկացնելու համար պետք է ներկայացնել՝
 - դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
 - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
 - անձը հաստատող փաստաթուղթ,
 - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքուկի պատճենը (առկայության դեպքում),
 - ինքնակենսագրություն (Չե 5),
 - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
 - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքուկ,
 - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
 - որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:
- Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
- Փաստաթղթերն ընդունվում են **հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:**
- Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 13-ին՝ ժամը 13:00-ին**, ՀՀ Արարատի մարզի Սիփանիկի հիմնական դպրոցում, հասցեն՝ Գ. Սիփանիկ, Գյումրու փ. 1:
- Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 63-02-80 հեռախոսահամարով:

Նախորդ համարի խաչբառի ատասխանները

Ուղղահայաց

- 1. Պակիրի, 2. Օխտուի, 3. Սուրեան, 4. Բարոն, 5. Կոնգո, 8. Նազիկ, 10. Արեմի, 12. Փոքորիկ, 14. Մեսսիան, 15. Լասո, 16. Ալպեր, 17. Կանաչ, 18. Ասուպ, 24. Ակոռի, 25. Ալ, 26. Անդեր, 28. Անի, 30. Նոյ, 34. Մագելան, 35. Իգ, 37. Աղթամար, 39. Ադանա, 40. Արձակ, 41. Ինգա, 42. Տամու, 43. Տայգա, 46. Ժաման, 50. Նեղուց, 52. Ինարի, 54. Արաքս, 55. Թերեք, 56. Ազովի:
- Հորիզոնական**
- 6. Կուկի, 7. Իրմա, 9. Որտանի, 11. Արփի, 13. Ամուր, 15. Լեմա, 17. Կուլա, 19. Քիլք, 20. Սեմա, 21. Որոտ, 22. Ռուխ, 23. Կարաչայ, 27. Ելկան, 29. Անապա, 31. Կոն, 32. Եղա, 33. Ուրմիա, 36. Նյասա, 38. Նիագարա, 44. Եղնա, 45. Լավա, 47. Գայլ, 48. Մաաս, 49. Ակնա, 51. Կրվո, 53. Գանա, 56. Արփա, 57. Ալվերան, 58. Ուրալ, 59. Լոռի:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Նոյակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (17 դասաժամ), կենսաբանության (12 դասաժամ), հայոց լեզվի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
 - դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
 - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
 - անձը հաստատող փաստաթուղթ,
 - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքուկի պատճենը (առկայության դեպքում),
 - ինքնակենսագրություն (Չե 5),
 - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
 - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքուկ,
 - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
 - որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև նոյեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 14-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արարատի մարզի Նոյակերտի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գ. Նոյակերտ, Նոյի 29:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 92-92-78 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երեսանի Ա. Իսահակյանի անվան հ. 16 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի Հայոց եկեղեցու պատմության (7 դասաժամ), հասարակագիտության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
 - դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
 - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
 - անձը հաստատող փաստաթուղթ,
 - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքուկի պատճենը (առկայության դեպքում),
 - ինքնակենսագրություն (Չե 5),
 - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
 - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքուկ,
 - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
 - որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 9-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ ԿԳՄՍՆ Երեսանի Ա. Իսահակյանի անվան հ. 16 ավագ դպրոցում, հասցեն՝ Երեսան, Նոր Արեւ, 9-րդ փ., շ. 53:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 45-07-30 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի հ. 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասավարի (2 մասնագետ, 32 դասաժամ), անգլերենի (12 դասաժամ), հասարակագիտության (15 դասաժամ), քիմիայի (18 դասաժամ), կենսաբանության (20 դասաժամ), բնագիտության, բնության (8 դասաժամ), տեխնոլոգիա (տղաների եւ աղջիկների խմբեր, 6-ական դասաժամ), մաթեմատիկա (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
 - դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
 - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
 - անձը հաստատող փաստաթուղթ,
 - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքուկի պատճենը (առկայության դեպքում),
 - ինքնակենսագրություն (Չե 5),
 - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
 - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքուկ,
 - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
 - որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև նոյեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 10-ին՝ ժամը 14:30-ին**, ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի հ. 2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Բաջարան, Արզվաճ 12:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 3-21-23, (098) 15-47-00 հեռախոսահամարներով:

